

ՓԱՅԼԱՆ ԿՈՉ ՈՒՂՂԵՑ ԹՈՒՐԲԻՈՅ՝ ԿՐԱԿԻՆ ՎՐԱՅ ՔԱՐԻԻՂ ԹՎՓՈՂ ԵՐԿԻՐ ԸԼԼԱԼԷ ԳԱԳՐԵԼՈՒ

Թուրքիոյ խորհրդարանի անդամ Կարօ Փայլան կոչ ուղղեց Թուրքիոյ՝ դադրելու կրակի վրայ քարիւղ թափող երկիր ըլլալէ։ Այս մասին Փայլան գրած է Դիմատետրի իր Էջին վրայ՝ անդրադառնալով Ազրայէճանի կողմէ Արցախի ուղղութեամբ սանձազերծուած ռազմական գործողութիւններուն։

«Ղարաբաղի մէջ կ'ընթանան լայնածաւալ բախումներ՝ հայ-ազրայէճանական զօրքերուն միջեւ։ Մեր երկիրը (Թուրքիան «Ա.») պէտք է դադրի կրակին վրայ քարիւղ թափող երկիր ըլլալէ։ Այս պատերազմին մէջ չկայ յաղթող։ Մենք ստանձնենք կրակոցի դադրեցման պատասխանատուութիւնը», գրեց Փայլան։



ԹՈՒՐԲԻՈՅ ԽՈՐՀՐԳԱՐԱՆԻ ԿՈՒՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒՍ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՂԱԳՐՈՂ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԱԾ ԵՆ



Թուրքիոյ խորհրդարանին մէջ ներկայացուած քաղաքական կուսակցութիւնները եւս յայտարարութիւններ կատարած են արցախեան շփման գիծին մէջ տեղի ունեցող զինուորական գործողութիւններուն մասին։

Իշխանական դաշինքին անդամ Ազգայնական շարժում կուսակցութեան նախագահ Տէյվիտ Պահչելին Երեւանը մեղադրած է «Ղարաւային Կովկասի մէջ անկայունութիւն ստեղծող, զաւթողական քաղաքականութիւն վարելու մէջ՝ յայտարարելով, թէ զինուորական գործողութիւններու վերսկսումը սպառնալիք է թէ՛ Ազրայէճանի, թէ՛ Թուրքիոյ ազգային անվտանգութեան»։

Ընդդիմադիր Յանրապետական ժողովուրդի կուսակցութեան խորհրդարանական խմբակցութեան ղեկավար Էնկին Եօզըչ միացած է իշխանական վերնախաւին՝ Ազրայէճանին սատարող յայտարարութիւններուն։ Կուսակցութեան թուիթթեան էջին վրայ եւս Յայաստանին դատապարտող հրապարակումներ կատարուած են։

Խորհրդարանական ուժերն միայն ժողովուրդներու ժողովրդավարական կուսակցութիւնը թրքական իշխանութիւններուն կոչ ուղղած է՝ գերծ մալու լարուածութիւնը արող գործողութիւններէն։

«Յայաստանի եւ Ազրայէճանի միջեւ սկսած բախումները կրնան վերածուիլ լայնածաւալ պատերազմի։ Թուրքիան պէտք է միջնորդական ջանքեր գործադրէ՝ ոչ թէ պատերազմի ընդարձակման, այլ երկու երկիրներու միջեւ խաղաղութեան հաստատման ուղղութեամբ», ըսուած է կուսակցութեան յայտարարութեան մէջ։

«ԿՈՎԿԱՍԷՆ ՏԱԳՆԱԳԱԼԻ ԼՈՒՐԵՐ ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Կովկասէն տագնապալի լուրեր կը ստացուին։ Կ'աղօթեմ այդ տարածաշրջանին մէջ խաղաղութեան համար եւ կոչով կը դիմեմ հակամարտող կողմերուն՝ ղէպի եղբայրութիւն տանող ուղղութեամբ շօշափելի քայլեր կատարելու եւ առանց ուժի կիրարկման բոլոր խնդիրները լուծման հասցնելու», ասանդական կիրակներէր քարոզին մէջ ըսած է Յռմմի եպիսկոպոսապետը։

Վատիկանի մէջ նաեւ տեղի ունեցած է Ամենայն Յայոց Գարեգին Բ. կաթողիկոսի եւ Յռմմի Ֆրանչիսկոս պապի հանդիպումը, որուն ընթացքին յատուկ անդրադարձ կատարուած է Ազրայէճանի կողմէ Արցախ-Ազրայէճան շփման գիծի ամբողջ երկայնքով սանձազերծուած գործողութիւններուն։ «Արմէնփրես»-ի հաղորդումով՝ այս մասին տեղեկացուցած է Մայր աթոռի տեղեկատուական համակարգի ղեկավար Վահրամ Բահանայ Մելիքեանը։

Դատապարտելով Ազրայէճանի կողմէ դրսեւորուած յարձակումը՝ Գարեգին Բ. կաթողիկոսը հաստատուած է, որ Արցախի ժողովուրդին իրաւունքներու յարգում եւ արդարութեան հռչակումով միայն կարելի պիտի ըլլայ վերահաստատել խաղաղութիւնն ու կայունութիւնը։

ԱԼԻԵՒԻ ՀՐԱՄԱՆԱԳԻՐՈՎ՝ ՍԵՊՏԵՄԲԵՐ 28-ԷՆ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԱՄԲՈՂՋ ՏԱՐԱԾՔԻՆ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՀԱՍՏԱՏՈՒԻ

Ազրայէճանի իշխանութիւնները սեպտեմբեր 28-էն երկիրի ամբողջ տարածքին զինուորական դրութիւն պիտի հաստատեն։ ԹԱՍՍ կը հաղորդէ, որ համապատասխան հրամանագիրը ստորագրած է նախագահ Իլհամ Ալիեւը։

Նախապէս հաղորդուած էր, որ Ազրայէճանի խորհրդարանը հրամանագիր հրապարակած է երկրի շարք մը քաղաքներուն եւ շրջաններուն մէջ զինուորական դրութիւն հաստատելու մասին։ Այս մասին եւս կը հաղորդէ ԹԱՍՍ-ը։

Ազրայէճանական «Յաքքին» կայքին փոխանցմամբ՝ Ազրայէճանի ներքին գործոց նախարարութեան տրուած են կրակմարի ժամ յայտարարելու վերաբերեալ լիազօրութիւնները։



ուած են կրակմարի ժամ յայտարարելու վերաբերեալ լիազօրութիւնները։

ՕԹԱՆ ԿՈՉ ՈՒՂՂԵՑ ԿՈՂՄԵՐՈՒՆ՝ ԳԱԳՐԵՑՆԵԼՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՇՓՄԱՆ ԳԻԾԻՆ ՄԷՋԻ ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ՕԹԱՆ-ի ընդհանուր քարտուղարի Կովկասի եւ Կեդրոնական Ասիոյ մէջ յատուկ ներկայացուցիչ Ճէմս Ափաթուրայ ուղերձ յղած է դարաբաղեան-ազրայէճանական շփման գիծին մէջ տիրող իրավիճակին վերաբերեալ։ «Արմէնփրես» կը հաղորդէ, որ այս մասին Նշուած է ՕԹԱՆ-ի պաշտօնական կայքին վրայ։

«ՕԹԱՆ խորապէս մտահոգ է Լեռնային Ղարաբաղի տագնապի գոտիին շփման գիծի ամբողջ երկայնքով լայնածաւալ զինուորական գործողութիւններուն վերաբերող հաղորդագրութիւններով։

«Կողմերը պէտք է անյապաղ դադրեցնեն զինուորական գործողութիւնները, որոնք արդէ պատճառ դարձած են քաղաքացիներու մահուան։ Այս



տագնապը զինուորական լուծում չունի։ Կողմերը պէտք է վերսկսին բանակցութիւններու՝ խաղաղ լուծման հասնելու համար։ ՕԹԱՆ կ'աջակցի ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ջանքերուն», Նշած է Ափաթուրայ։

ԱԶՐՊԷՅՃԱՆ ԹՈՒՐԲԻՈՅ ԱՉԱԿՅՈՒԹԵԱՄԲ ...

Շարունակուած Ա. Էջէն



կան լրատուամիջոցները առաջնագիծէն նիւթը կը հրապարակեն, որ լոյնպէս կը փաստէ, որ Ազրայէճանի ձեռնարկած սադրանքը նախապէս ծրագրուած էր։

Ակնյայտ է, որ Ազրայէճան իր սանձազերծած պատերազմական լայնածաւալ գործողութիւններուն ձեռնարկած էր Թուրքիոյ անվերապահ աջակցութեան պայմաններուն մէջ։ Ազրայէճան-Թուրքիա այս դաշինքին՝ թշնամական երկեակին կարելի է դժմ դնել միայն հայութեան բոլոր կենսական ուժերը համախմբելով ու լարելով, պատերազմական պայմաններուն մէջ թիկունքը ամուր պահելով։ Աներկբայ է, որ թէ յարձակողապաշտ եւ պատերազմական գործողութիւնները շարունակուին, անոնց ամբողջ պատասխանատուութիւնը պիտի կրեն Թուրքիոյ եւ Ազրայէճանի քաղաքական ու զինուորական բարձրագոյն ղեկավարութիւնները։ Եւ հայ ազգը շատ լաւ կը գիտակցի այս իրականութեան, կը գիտակցի նաեւ, որ պատերազմական գործողութիւններուն սկսելու պահէն իսկ իւրաքանչիւր հայ պէտք է ինքզինքն զգայ իբրեւ հայոց բանակի զինուորը...

«ՄԵՆՔ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ. . .»

Շարունակուած Ա. Էջէն

«Կոչ կ'ուղղենք մեր ժողովուրդի զաւակներուն, որ զանազան կերպերով իրենց ամբողջական զօրակցութիւնը յայտնեն հայրենիքին ու հայոց բանակին։ «Երբ հայրենիքը վտանգի ենթակայ է, ողջ հայութիւնը կը դառնայ հայոց բանակ։ Այն կը վկայէ մեր պատմութիւնը. ա՛յն է մեր պատմութեան պատգամը։

«Կ'աղօթենք առ բարձրեալն Աստուած, որ մեր հայրենիքը ու բանակը հեռու պահէ ամէն տեսակ երեւելի ու աներեւոյթ չարքեր ու չարիքներէ»։

ԵԱՀԿԻ ՄԻՆԱՔԻ ԽՄԲԱԿԻ ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԵՑԻՆ ԵՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՆՅԱՊԱՂ ԳԱԳՐԵՑՄԱՆ ԿՈՉ ՈՒՂՂԵՑԻՆ



ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահները հրապարակած են յայտարարութիւն՝ Նշելով, որ բանակցութիւններու միջոցով Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խաղաղ լուծումը այլընտրանք չունի։ «Արմէնփրես» կը հաղորդէ, որ այս մասին յայտարարութիւնը տեղադրուած է ԵԱՀԿ-ի պաշտօնական կայքին վրայ։

«Համանախագահները մտահոգութեամբ կը հետեւին դարաբաղեան հակամարտութեան գոտիի շփման գիծին երկայնքով ընթացող լայնածաւալ զինուորական գործողութիւններուն մասին հաղորդագրութիւններուն։ Համանախագահները կողմերուն կոչ կ'ուղղեն՝ անյապաղ դադրեցնելու մարտական գործողութիւնները եւ վերսկսելու բանակցութիւնները՝ տագնապի կայուն լուծում գտնելու համար։ Համախաղաքիները կողմերուն կոչ կ'ուղղեն՝ ձեռնարկելու բոլոր անհրաժեշտ միջոցներուն՝ տեղւոյն վրայ իրավիճակի կայունացման համար եւ կրկին կը յայտարարեն, որ բանակցութիւններու միջոցով տագնապի խաղաղ լուծումը այլընտրանք չունի», ըսուած է յայտարարութեան մէջ։

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ՝ ԿՐԱԿՈՅԸ ԱՆՅԱՊԱՂ ԳԱԳՐԵՑՆԵԼՈՒ ԵՒ ԱՌԱՅ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԻ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ՄԵՂԱՆ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ

Եւրոպական խորհուրդի նախագահ Շարլ Միշել Լեռնային Ղարաբաղի տագնապի կողմերուն անյապաղ կրակոցի դադրեցման եւ բանակցութեան սեղան վերադառնալու կոչ ուղղած է։ Այս մասին կը հաղորդէ ռուսական ԹԱՍՍ լրատու գործակալութիւնը։

«Չինուորական գործողութիւնները պէտք է անյապաղ դադրեցուին, որպէսզի կանխարգիլուի հետագայ սրումը։ Անյապաղ վերադարձ պէտք է կատարուի բանակցային հոլովոյթին՝ առանց նախապայմաններու. ասիկա յառաջ շարժելու միակ ուղին է», իր թուիթթեան էջին վրայ գրած է Եւրոպական խորհուրդի նախագահը։

Միւս այդ, Եւրոպական Միութիւնը կոչ ուղղեց՝ «դադրեցնելու Լեռնային Ղարաբաղի մէջ կռիւը եւ անմիջապէս վերադառնալու բանակցութեան»։



ԷՐՏՈՂԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆ ԱՆԳԱՄ ՄԸ ...»

Շարունակուած Ա. Էջէն

«Թուրքիան, ինչպէս միշտ, իր ամբողջական կառողականութեամբ կը կանգնի Ազրայէճանի կողքին», Նշեց Էրտողան։

Թուրքիոյ նախագահի բանբեր Իպրահիմ Քալըն դատապարտեց «Ազրայէճանի դժմ հայկական վերջին յարձակումը» եւ յայտնեց, որ Անգարա բոլոր պայմաններու մէջ կը զօրակցի Պաքուին։

Քալըն միջազգային ընտանիքին կոչ ուղղեց՝ «անմիջապէս դադրեցնելու այս վտանգաւոր սադրանքը»՝ Նշելով. «Թուրքիան Ազրայէճանի կողքին կը կանգնի եւ իր ամբողջական աջակցութիւնը կը յայտնէ անոր»։

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը, իր կարգին, իր բացարձակ աջակցութիւնը յայտնեց Ազրայէճանին, ինչպէս նաեւ պատրաստակամութիւնը՝ անոր կողքին կանգնելու։

Թուրքիոյ պաշտպանութեան նախարար Յուլուսի Աքար ըսաւ. «Կովկասի մէջ խաղաղութեան ու կայունութեան մեծագոյն արգելքը Յայաստանի թշնամական կեցուածքն է, եւ ան պէտք է անմիջապէս ետդարձ կատարէ իր թշնամական գործողութենէն, որ տարածաշրջանը կրակի պիտի մատնէ»։

Ան աւելցուց, որ Անգարա «իր ամբողջ ներուժով» պիտի աջակցի Պաքուին։

ՀՀ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«ԱՅՍ ՊԱՀԻՑ ԲՈԼՈՐՍ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶԻՆՈՒՌՆ ԵՆՔ»

Երեկ՝ 27 սեպտեմբերին ՀՀ Գերագոյն մարմինը տարածեց յայտարարութիւն մը, որուն մէջ անդրադարձաւ Ազրայէճանի կողմէ Արցախի Հանրապետութեան դէմ յարձակումին՝ հաստատելով, որ բոլորս հայոց բանակի զինուոր ենք ու պատրաստ՝ հայրենիքին համար պայքարելու:

Յայտարարութեան մէջ ըստւած է.-

«Սիրելի՛ հայրենակիցներ, «Այսօր առաւօտեան ազրայէճանական բանակը Արցախի հետ շփման ողջ երկայնքով անցել է յարձակման: Հերթական անգամ Ազրայէճանը սանձազերծել է պատերազմական գործողութիւններ: Մեր յաղթանակի գրաւականն է ամուր թիկունք, ժողովրդի համախմբում, միասնականութիւն:

«Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, իր ողջ համահայկական կարողականութեամբ եւ վճռականութեամբ կանգնած է հայոց բանակի կողքին: Այս պահից մենք բոլորս հայոց բանակի զինուորն ենք եւ պատրաստ ցանկացած մարտական առաջադրանքի: Համոզուած ենք, այս ճակատամարտում եւս հայ ժողովուրդը կ'արձանագրի իր յաղթանակը»:

«ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԼԻՆԵԼՈՒ Է ԿՈՇՏ, ԻՆՉՊԷՍ ԵՐԲԵՔ».
ՏՕՆՈՅԵԱՆ՝ ՀԱԿԱՌԱԿՈՐԳԻՆ ԾԱԽԱԼԱՃ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ



Հայաստանի պաշտպանութեան նախարար Դաւիթ Տոնոյեան յոյճ ուղերձ մը, որուն մէջ կշեց, թէ Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան բանակը վճռական հակահարուածներով կը կասեցնէ թշնամիին յառաջխաղացքի բոլոր փորձերը՝ թշնամիին պատճառելով ծանր կորուստներ:

Ան ընդգծեց, որ Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերը, հանդիսանալով Արցախի անվտանգութեան երաշխաւորը, պատրաստ են ցուցաբերել ռեւէ աջակցութիւն՝ ապահովելու Արցախի բնակչութեան անվտանգութիւնը:

«Այսօր վաղ առաւօտեան, կոպտագոյնս խախտելով միջազգային մարդասիրական իրաւունքի գործող խորմերն ու հակամարտութեան լուծման խաղաղ բանակցային գործընթացի տրամաբանութիւնը, ազրայէճանական զինուած ուժերը հրթիռահրետանային եւ օդանաւային միջոցների կիրառմամբ յարձակման են անցել արցախա-ազրայէճանական ուժերի շփման գծի ողջ երկայնքով՝ թիրախորդելով պաշտպանութեան բանակի մարտական դիրքերն ու Արցախի խաղաղ բնակավայրերը: Այդպիսով, մարտական գործողութիւնների հետեանքների ողջ պատասխանատուութիւնը կրում է Ազրայէճանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը: Արդէն իսկ ակներեւ է, որ դասեր չքաղելով նախկինում ունեցած անփառունակ պարտութիւններից՝ Ազրայէճանի իշխանութիւնները կրկին գերազնահատել են ունեցած կարողութիւնները, ինչի համար, վստահ եմ, խստագոյնս կը պատժուեն», իր ուղերձին մէջ կշեց պաշտպանութեան նախարարը:

Անոր համաձայն՝ այս արկածայինդրութիւնը ծանր հետեանքներ պիտի ունենայ թշնամիին համար, իսկ պատասխանը պիտի ըլլայ կշտ, ինչպէս երբեք: Տոնոյեան հաստատեց, որ հայկական բանակը կը տիրապետէ անհրաժեշտ բոլոր միջոցներուն՝ հերթական անգամ ջախջախելու հայրենիքի նկատմամբ ոտնձգութիւն իրականացնող թշնամին:

«Յարգելի՛ հայրենակիցներ, զինակից ընկերներ, միասնութեան շնորհիւ են կերտուել մեր պատմութեան բոլոր յաղթանակները: Վստահ եմ, որ այս վճռական պահին մենք միասնաբար, պատուով ենք կատարելու մեր մարտական խնդիրը՝ դաս տալով միայն ուժի լեզուն հասկացող թշնամուն», յայտնեց Տոնոյեան:

«ԱԶԴԱԿ»-Ի ՖՈՆՏԻՆ

- Վարանդ Փափագեանի մահուան առիթով՝
Տոքթ. Շահէ եւ Անի Ենիգոմշեան (Սան ֆրանսիսքո) 500.000 լ.ո.
- Սեդրակ Դանիելեանի մահուան առիթով՝
Տէր եւ տիկին Յարութիւն Մարկարուեան՝ 100.000 լ.ո.

ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՎ ԱՐՑԱԽԻ ՎՐԱՅ ՀԱԿԱՅԱՅ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ

ՅԱԿՈՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ՅԱՂԹԵԼՈՒՒ ԵՆՔ»

Արցախի դէմ շղթայազերծուած յարձակումները երեկ դատապարտումի բռնու ալիք յառաջացուցին աշխարհասփիռ հայութեան մօտ:

Այս գծով ՀՀ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի իր կարգին խստօրէն դատապարտեց հակահայ յարձակումները եւ կատարեց հետեւեալ գրառումը. «Ազրայէճան, թրքական ուժերու եւ ահաբեկչական ծանօթ վարձկաններու հետ, իսրայէլեան զենքերով զինուած՝ դարձեալ պատերազմ յայտարարեց Արցախի խաղաղ բնակչութեան, կիներուն եւ մանուկներուն դէմ:

«Զարիքի դարաւոր առանցքը կազմող՝ Թուրքիա-Իսրայէլ-Ազրայէճան երրորդութիւնը անգամ մը եւս ընդհարում եւ անկայունութիւն սփռեց Արցախի մէկէ աւելի շրջաններու մէջ, բայց եւ այնպէս, մենք՝ արդար իրաւացիներս, յաղթելու ենք» ընդգծեց երեսփոխան Յակոբ Բագրատունի:

ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆ. «ԱՅՍ ՊԱՀՈՒՆ ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԸԼԼԱՆՔ ՄԻԱՄՆԱԿԱՆ. ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ ՄԵՐ ԳԵՐԻՆԴԻՐՆ Է»



Դ ա շ ն ա կ ց ու լ թ է ա ն

«Շուշիի առանձնակի գումարտակ»-ի հիման վրայ գործող Կամուրաբական շարժման համակարգողներու կոչին ընդառաջելով, բազմաթիւ քաղաքացիներ կոմատուրբար հաւաքուեցան Արամ Մանուկեանի արձանին մօտ:

Ներկաներուն կոչով դիմեց «Կամուրաբական շարժում» հասարակական կազմակերպութեան նախագահ Հրանդ Մարգարեանը եւ ըսաւ. «Մենք միշտ խօսել ենք ազգայնական, համաժողովրդական բանակի, պահեստազօրը կազմակերպելու, պատրաստ լինելու մասին: Յաւօք, մեր կոչերը շատ ուշ են արձագանգ գտել, հազիւ կարողացել ենք մենք պատրաստուել: Բայց պատրաստ ենք: Պատրաստ ենք եւ սպասում ենք հրամանի, պատրաստ ենք եւ ասում ենք՝ ոչ մի քաղաքական հարց, ոչ մի քաղաքական տարածայնութիւն չի կարող այսօր մեր միասնականութեան մէջ որեւէ կեղտ իջեցնել»:

Ան կշեց, որ ազգովին դէպի ճակատ պէտք է երթալ, դեմ դնել ամէն սպառնալիքի եւ ուժով հակադարձել թշնամիի հարուածներուն:

«Մենք պէտք է յաղթենք այս պատերազմում եւ այս պատերազմի յաղթանակը պէտք է նուիրենք մեր եկող սերունդներին: Գերխնդիրը թշնամին է, որին պէտք է ծունկի բերել, այս պահին չունենք այլ գերխնդիր, կը գայ օրը,

Նորէն կը հաւաքուենք, Նորէն կը ընկարկենք խնդիրները, բայց այսօր

ունենք մէկ խնդիր՝ թշնամին ծնկի բերելու եւ դրան պէտք է պատրաստ լինենք»:

Հրանդ Մարգարեանը յայտարարեց, որ՝ իբրեւ Գերդ Զաւուշի, Սերոբ Աղբիւրի, Արամ Մանուկեանի, Վարդան

Դուշմանի, Թաթուլ Կրպեանի ժառանգորդներ, ՀՀ-ն պէտք է ըլլայ առաջամարտիկը եւ քալէ առջէւն. «Պէտք է գնանք առջեւից՝ մեզ հետ տանելով ժողովուրդն ու ազգը: Մենք պէտք է կարողանանք սովորեցնել, որ հայրենասիրութիւնը գործունէութիւն է, որ պէտք է կատարուի, ոչ թէ խօսք է: Եւ այդ գործի ապացոյցը պէտք է լինենք մենք բոլորս», ըսաւ Մարգարեան:

ԱՐՑԱԽԻ ՄԷՋ ՈԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՀԱՍՏԱՏԱՐԱՅ ԶՕՐԱՅԻՄԸ

«ՍԱ ԿԵՆԱՅ ՄԱՀՈՒ ԿՈՒԻ Է, ԶՈՐ Կ'ԸՆԴՈՒՆԻՆԵՔ ԱԶԳՈՎԻՆ ԵՒ ԱԶԳՈՎԻՆ ՅԱՂԹԱՆԱԿ ԵՆՔ ՏԱՆԵԼՈՒ»

ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀ



Արցախի Հանրապետութեան նախագահ Արայիկ Յարութիւնեան Արցախի խորհրդարանի արտակարգ նիստին հանդէս եկաւ յատուկ ուղերձով՝ յայտարարելով ռազմական դրութիւն եւ համատարած զօրահաւաք տասնութէն բարձր տարիքային խումբի համար: Արցախի նախագահը այս մասին գրառում կատարեց Դիմատետրի իր էջին վրայ:

«Ելնելով ստեղծուած իրավիճակից՝ Ազգային ժողովի արտահերթ նիստ է հրաւիրուել: Հանդէս գալով պատգամաւորների առջեւ՝ յայտարարել եմ ռազմական դրութիւն եւ համատարած զօրահաւաք տասնութից բարձր տարիքային խմբի համար:

«Մենք բազմիցս յայտարարել ենք, որ պատերազմի կողմնակից չենք, բայց պատրաստ ենք պատերազմի:

«Մեզանից աւելի շատ խաղաղութիւն սիրող ու խաղաղութեան կողմնակից չկայ:

«Մենք չենք ցանկացել պատերազմ, այս պատերազմը մեզ պարտադրուել է, եւ պարտաւոր ենք պաշտպանել մեր հայրենիքն ու ընտանիքները:

«Իրավիճակի սրման համար ամբողջ պատասխանատուութիւնը կրելու է Ազրայէճանի ռազմաքաղաքական իշխանութիւնը:

«Տարածաշրջանում յդի հումանիտար աղետի համար պատասխան է տալու անձամբ Ազրայէճանի նախագահ Ալիեւը», գրեց Յարութիւնեան:

Շար.ը՝ էջ 4

«ԱՅՍ ԱՆԳԱՄ ԵՒՍ ՀԱԿԱՌԱԿՈՐԳԸ ՊԻՏԻ ԶԱԽՈՂԻ».
ԶԱԼԱԼ ՅԱՐՈՒԹՅՈՒՆԵԱՆԻ ՄԱՐՏԱԿՈՅԸ

Արցախի Հանրապետութեան պաշտպանութեան բանակի հրամանատար Յալալ Յ ա ր ու թ ի ու ն ե ա ն հետեւեալ մարտական կոչով դիմեց զինուորներուն.-

«Հայրենակիցներ, 2016 թուականի մարտական գործողութիւններից շուրջ չորս տարի անց հակառակորդը կրկին դիմել է զենքի ուժին՝ յարձուել, թէ այդ ճանապարհով կարողանալու է յօգուտ իրեն լուծել արցախեան հիմնահարցը: Սեպտեմբերի 27-ի առաւօտեան ազրայէճանական բանակը հրթիռահրետանային նախապատրաստութիւնից ու անօդաչու թռչող սարքերի հարուածներից յետոյ յարձակման է անցել շփման գծի ամբողջ երկարութեամբ: Այս պահին պաշտպանութեան ստորաբաժանումները, հակառակորդին մեծաթիւ կորուստներ պատճառելով, յաջողութեամբ խափանում են նրա ծրագրերը: Այդ ծրագրերը մեզ յայտնի են վաղուց, դրանց ելութիւնը կարելի է արտայայտել մի բառակապակցութեամբ՝ հայաթափել Արցախն ու Հայաստանը:

Վստահ եղեք, այս անգամ եւս հակառակորդը ձախողուելու է: Յաղթանակը հեշտ չի տրուելու: Իր քնոյթին հաւատարիմ՝ հակառակորդը թիրախաւորելու է խաղաղ բնակավայրերն ու քաղաքացիական բնակչութեանը, Նա տարբերութիւն չի դնելու զինուորի ու մանկահասակ երեխայի, հոգեւորականի ու տարեց կնոջ, հասուն տղամարդու եւ անօգնական ծերունու միջեւ. նրա թիրախը բոլորս ենք: Յաղթանակը պահանջելու է ուժերի գերաւորում եւ երկաթակուռ միասնութիւն: Հիմա մի կողմ պէտք է դրուեն բոլոր տարակարծութիւնները, բոլոր տեսակետները, բոլոր կարծիքները: Մեր նպատակը մէկն է՝ ջախջախել հակառակորդին բոլոր հնարաւոր միջոցներով, խորտակիչ հարուածներ հասցնել նրա զինուած աւազակախմբերին, ոչնչացնել նրա ռազմական ենթակառուցումը, անհրաժեշտութեան դէպքում նաեւ ընդարձակել անվտանգութեան գոտին ու պարտադրել վերջնական խաղաղութիւն:

Այդ խնդիրը կատարելու համար պէտք է մէկ տեղուեն բոլորիս ջանքերը:

Մեր յաղթանակն այլընտրանք չունի. մենք պաշտպանում ենք մեր նախնիների շիրիմներն ու մեր երեխաների ապագան: Մենք պաշտպանում ենք մեր նախնիների հողի վրայ ապրելու իրաւունքը:

Մեզ հետ է ամբողջ հայ ժողովուրդը:

Մեզ հետ է արդարութիւնը:

Մեզ հետ է Աստուած:

Յաղթանակը մերն է լինելու»:

ՀՅԴ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՄԱՐՄԻՆԸ ԿՈՉ ԿՈՒՂՂԷ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ, ԱՐԱՔԱԿԱՆ ԵՒ ՄԵԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԵԱՆ՝ ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՒ ԱԶՐՊԵՅՃԱՆԸ



ՀՅԴ Լիբանանի Չայ դատի Մարմինը երեկ լիբանանեան լրատուամիջոցներուն յղեց հետեւեալ հաղորդագրութիւնը.

«ՀՅԴ Լիբանանի Չայ դատի Մարմինը կը դատապարտէ այսօր առաւօտեան ագրայեմանկան բանակին կողմէ Արցախի Չանրապետութեան վրայ գործուած յարձակումն ու անգէն քաղաքացիներու թիրախաւորումը: Ագրայեմանկան բանակը յարձակեցաւ Արցախի Չանրապետութեան տարածքին վրայ, ինչպէս նաեւ ռմբակոծեց մայրաքաղաք Ստեփանակերտը եւ յարակից բնակելի տարածքները՝ քաղաքայիններու շարքերուն մէջ պատճառելով զոհեր:

«Չայկական ուժերը ագրայեմանկան յարձակումները դիմակայելու ընթացքին բանդէցին ագրայեմանկան թշնամի բանակի 4 ուղղաթիւ, 15 անօդաչու թռչող սարք եւ 10 հրասայլ:

«Լոր ռազմական եւ գետնի վրայ զարգացումները նման են այն մարտերուն, որոնք տեղի ունեցան 2016-ին՝ երկու կողմերուն միջեւ:

«Նախորդ շաբաթներուն, Թուրքիոյ աջակցութեամբ տարբեր երկիրներէ եւ ազգութիւններէ հազարաւոր ահաբեկիչներ զինակոչուած են, որպէսզի աջակցին ագրայեմանկան ուժերուն:

Ուստի մենք լիբանանեան, արաբական եւ միջազգային հանրութեան կոչ կ'ուղղենք՝ դատապարտելու Ագրայեմանը եւ անկէ պահանջելու անյապաղ դադրեցնել իր ռազմական գործողութիւնները:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ ՈՐԴԵՐՁ.

Շարունակուած Ա. Էջէն

Արցախի պաշտպանութեան բանակն իր առաջին իսկ պատասխանով վերստին ապացուցեց, որ պատրաստ է արագօրէն արձագանգել ցանկացած ռազական գործողութեան:

Ցանկացած յարձակումի մեր պատասխանը եղել է, կայ եւ լինելու է խաղաղութեան վերահաստատումը, Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի եւ անվտանգութեան ամրապնդումը:

Մենք ակնկալում ենք, որ միջազգային հանրութեան՝ առաջին հերթին ԵԱՀԿ Մինսքի խմբակի համակարգաւ երկրների, պետութիւնների, միջազգային կառոյցների, անհատների կողմից համարժեք եւ գործնական արձագանգ կը տրուի Ագրայեմանի պատերազմական գործողութիւններին:

Ագրայեմանն իր այդ գործողութիւններով միջազգային միջնորդներին եւ միջազգային հանրութեանը անթաքոյց ցոյց է տալիս, որ չի ցանկանում Արցախի հարցը կարգաւորել բանակցութիւնների միջոցով եւ նպաստել խաղաղութեանն ու կայունութեանը տարածաշրջանում, շարունակում է ոտնահարել համամարդկային արժեքները, թիրախաւորել քաղաքացիական բնակչութեանը, բուժաստատութիւնները եւ հաղորդակցութեան ուղիները:

Մենք յոյսով ենք, որ միջազգային հանրութեան կողմից հրատապ քայլեր կը ձեռնարկուեն Ագրայեմանի կողմից հրահրուած պատերազմը դադարեցնելու ուղղութեամբ: Դա անհրաժեշտ է մարդկային հետագայ զոհերից խուսափելու եւ տարածաշրջանում ստեղծուած առանց այն էլ փխրուն իրավիճակն աւելի ծայրահայտիւնացնելու համար:

Սիրելի՛ հայրենակիցներ, Արցախեան գոյամարտում ձեռք բերուած յաղթանակը մեր միասնութեան ու համախմբման արդիւնք է, այսօր այդ յաղթանակի պահպանումը մեզանից իւրաքանչիւրի նուիրական պարտքն է:

Մեր հայրենիքի ճակատագիրը կախուած է մեզնից, մեր միասնութիւնից, համերաշխութիւնից եւ կարգապահութիւնից:

Պէտք է համախմբուել:

Համախմբումը մեր յաղթանակների անվերապահ գրաւականն է: Այս պահին պիտի մի կողմ դնենք բոլոր քաղաքական տարածայնութիւններն ու անձնական հակառակութիւնները եւ դառնանք ամուր թիկունքը մեր զինուած ուժերի:

Գործենք միասին՝ որքան էլ տարբեր լինեն մեր մտածելակերպը, աշխարհայացքը եւ պատկերացումները:

Չայաստանում, Արցախում, սփիւռքում իւրաքանչիւրիս կարողութիւնն ու ներուժը պէտք է օգտագործուեն հայրենիքի համար:

Աստուած պահապան մեր բանակին: Աստուած պահապան բոլորիս»:

ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ Է . . .

Շարունակուած Ա. Էջէն

«Զննարկուած է իրավիճակի կտրուկ սրացումը Էռեւային Դարաքաղի տագնապի շրջանին մէջ: Ռուսական կողմը լուրջ մտահոգութիւն յայտնած է լայնածաւալ ռազմական բախումներու վերսկսման առնչութեամբ: Նշուած է, որ այժմ կարելու է ձեռնարկել բոլոր անհրաժեշտ ջանքերու՝ տագնապին հետագայ մագլցումը թոյլ չտալու համար, եւ կարելու՝ անհրաժեշտ է դադրեցնել ռազմական գործողութիւնները», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

«ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ



Երեկ՝ 27 սեպտեմբերին «Կամաւորական շարժում» հասարակական կազմակերպութիւնը տարածեց յայտարարութիւն մը, որուն մէջ անդրադարձաւ Ագրայեմանի կողմէ Արցախի Չանրապետութեան դէմ շղթայագերծուած յարձակումին:

Ցայտարարութիւնը՝ ստորեւ.-

«Սիրելի՛ հայրենակիցներ, զինակիցներ,

«ՀՅԴ Շուշիի առանձնակի գումարտակի հիման վրայ գործող Կամաւորական շարժման անունից կոչ ենք անում այս վճռական պահին, երբ հայրենիքը կրկին գտնուում է վտանգի մէջ, երբ թշնամին նոր յարձակում է սկսել ճակատի ողջ երկայնքով, համախմբուել, մէկտեղել բոլոր ուժերը, կանգնել հայրենիքի պաշտպանութեան ճակատում, լինել մեր երկրի անվտանգութեան գլխաւոր երաշխաւոր զինուած ուժերի եւ Արցախի Պաշտպանութեան բանակի կողքին: Կոչ ենք անում, հարկ եղած դէպքում կատարել կամաւորական աշխատանք, իւրաքանչիւրս իր կարողութիւնների շրջանակում, առանց ինքնագործունեութեան ենթարկուել պատասխանատուների հրահանգներին:

«Ապրիլեան պատերազմից յետոյ ձեւաւորուած Կամաւորական շարժման հարկւրաւոր անդամներ պատ-

րաստ են հարկ եղած դէպքում կրկին մեկնել առաջնագիծ կանգնելու մեր զինուորի, սպայի կողքին:

«Այս վճռական պահին, երբ թշնամին հերթական փորձն է անում հարուածել մեր ազատամարտի յաղթական արդիւնք Արցախի Չանրապետութեանը, իւրաքանչիւրիս պարտքն է դառնալ կամաւոր եւ մեր երկրի պաշտպան: Իւրաքանչիւրս մեր մասնագիտական, երբեմն ոչ մասնագիտական կարողութիւններով կարող ենք աջակցել, որպէսզի հնարաւորինս քիչ կորուստներով դիմակայենք յարձակողապաշտ թշնամիին:

«Ինչպէս 2016 թուականի ապրիլեան օրերին, այնպէս էլ այսօր ՀՅԴ կամաւորականները պատրաստ են մեկնել առաջնագիծ:

Կամաւորական շարժման անդամներն արդէն կազմ պատրաստ են, կատարելու մեր երկրի ռազմական ղեկավարութեան հրահանգները:

Մեզ կարող են միանալ բոլորը, կամաւորագրուելով մեր երկրի պաշտպանութեանը: Կարող էք դիմել մեզ ներկայանալով Երեւան, Չանրապետութեան 30 հասցեով կամ զանգահարել 521502 հեռախօսահամարով»:

Նշուեցաւ նաեւ, որ «Կամաւորական շարժում» հասարակական կազմակերպութեան կամաւորներու հաւաքը տեղի կ'ունենայ սեպտեմբերի 27-ին ժամը 12:30-ին, Արամ Մանուկեանի արձանի մօտ:

14 ԿՈՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ.

ԱՄԲՈՂՋ ՆԵՐՈՒԺՈՎ ԿԸ ՍԱՏԱՐԵՆՔ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻՆ ԵՒ ԿԱԶԱԿՑԻՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Կոպտօրէն խախտելով բազմիցս ստանձնած միջազգային յանձնառութիւնները, 1994-ի հրադադարի մասին եռակողմ համաձայնագիրը, ինչպէս նաեւ արհամարհելով ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղարի՝ համավարակի պայմաններում ռազմական գործողութիւնները դադարեցնելու կոչը, սեպտեմբերի 27-ի առաւօտեան ագրայեմանկան բանակը Արցախի հետ չլիման ողջ երկայնքով անցել է յարձակման:

Ագրայեմանը, Թուրքիայի բացառապէս աջակցութեամբ եւ խրախուսմամբ, Արցախի Չանրապետութեան նկատմամբ սկսել է լայնածաւալ ռազմական գործողութիւններ՝ թիրախաւորելով նաեւ բնակավայրեր եւ խաղաղ բնակչութեանը:

Պաշտպանութեան բանակը հաստատակամ իրականացնում է հակառակորդին դիմակայելու իր առաքելութիւնը:

Այս բախտորոշ պահին առաջնային է համահայկական կարողականութեան մէկտեղումը եւ միասնական համազգային պատասխանը Նախայարձակին:

Մենք՝ Չայաստանի Չանրապետութիւնում գործող քաղաքական կուսակցութիւններս, ողջ ներուժով սատարում ենք հայոց բանակին եւ աջակցում Չայաստանի եւ Արցախի Չանրապետութիւններին՝ միջազգային ասպարեզում բացայայտելու եւ դատապարտելու թշնամու հերթական յարձակումը:

Կոչ ենք անում համայն հայութեանը՝ համախմբուել այս նպատակների շուրջ՝ ապահովելով ամուր թիկունք եւ միասնականութիւն:

Դիմում ենք միջազգային կազմակերպութիւններին, հանրութեանը եւ պետութիւններին՝ դատապարտելու հայ ժողովրդի դէմ սանձագերծած ագրայեմանաթուրքական հերթական պատերազմը:

Ցաղթանակը մերն է:

«Ազատութիւն» կուսակցութիւն
«Ազգային օրակարգ» կուսակցութիւն
«Ազգային ժողովրդավարական միութիւն» կուսակցութիւն
«Ազգային ինքնորոշում միաւորում» կուսակցութիւն
«Բարգաւաճ Չայաստան կուսակցութիւն»
«Երկիր Ճիրանի» կուսակցութիւն
«Ժառանգութիւն» կուսակցութիւն
«Լուսաւոր Չայաստան կուսակցութիւն»
«Չայաստանի դեմոկրատական կուսակցութիւն»
«Չայաստանի Չանրապետական կուսակցութիւն»
«Չայ յեղափոխական դաշնակցութիւն»
«Չայրենիք» կուսակցութիւն
«Յանուն սոցիալական արդարութեան» կուսակցութիւն
«Եկ Չայաստան» կուսակցութիւն

27 սեպտեմբեր 2020

Յ. Գ. Ցայտարարութիւնը բաց է միանալու համար:

ՖՐԱՆՍԱՅԻ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ «ԱՆՅԱՊԱՂ ԴԱԴԻԵՑՆԵԼ ՄԱՐՏԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՄԵՉ»



Ֆրանսայի Ընկերվարական կուսակցութիւնը կոչ կ'ուղղէ անյապաղ դադրեցնելու մարտերը Արցախի մէջ:

Ֆրանսայի Ընկերվարական կուսակցութիւնը խստօրէն կը դատապարտէ 27 սեպտեմբեր 2020-ին Արցախի Չանրապետութեան դէմ ագրայեմանկան ուժերուն կողմէ գործադրուած ռազմական յարձակումը:

Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, պատմականօրէն հայերով բնակեցուած Կովկասի այս շրջանը ժողովրդական հանրաքուէի միջոցով հռչակեց իր անկախութիւնը 2 սեպտեմբեր 1991-ին: Այս անկախութիւնը մշտապէս կը փիճարկուի Ագրայեմանի կողմէ եւ այդ ժամանակէն ի վեր, 150.000 բնակչութիւն ունեցող այս փոքր հանրապետութիւնը կը դիմակայէ 10 միլիոն բնակչութիւն ունեցող իր ագրայեմանցի դրացիի 130 հազարոց բանակին կրկնուող յարձակումները:

27 սեպտեմբերի առաւօտեան կանուխ ժամերէն ագրայեմանկան բանակը յարձակում ձեռնարկեց Արցախի Չանրապետութեան սահմանամերձ քաղաքներուն վրայ եւ ռմբակոծող անօդաչու սարքեր ուղարկեց Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտ՝ բազմաթիւ զոհեր պատճառելով խաղաղ բնակչութեան շրջանին մէջ:

Այս յարձակումը տեղի կ'ունենայ արդէն իսկ լարուած իրավիճակի մէջ, երբ 2016-ին Արցախի սահմանամերձ գօտիին մէջ ագրայեմանցիներու կողմէ ձեռնարկուեցան բռնի յարձակումներ եւ 2020-ի յուլիսի վերջին Չայաստանի Տաւուշի շրջանին մէջ տեղի ունեցան կատաղի մարտեր: Ֆրանսայի Ընկերվարական կուսակցութիւնը ցաւ կը յայտնէ, որ Թուրքիան, իր անվերապահ քաղաքական եւ ռազմական աջակցութիւնը յայտնելով Ագրայեմանին՝ ներգրաւուած է այս տագնապին մէջ:

Ֆրանսայի Ընկերվարական կուսակցութիւնը կոչ կ'ուղղէ Ֆրանսային եւ Եւրոպական Միութեան՝ անյապաղ միջոցներու ձեռնարկելու բախումները դադրեցնելու եւ պահպանելու 1994-ին կնքուած զինադադարի դրութիւնը:

Ստեղծուած ծայրայեղ լարուած իրավիճակը կը պահանջէ Մինսքի խմբակի անյապաղ հանդիպում եւ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի շտապ արձագանգ՝ խաղաղ լուծում գտնելու եւ վերահաստատելու Արցախի անկախութիւնն ու անոր ճանաչումը միջազգային հանրութեան կողմէ:

Փարիզ, 27 սեպտեմբեր 2020

«ՍԱ ԿԵՆԱՅ ՄԱՀՈՒ . . . »

Շարունակուած 3-րդ Էջէն

Արցախի Չանրապետութեան Նախագահ Արայիկ Յարութիւնեան նաեւ հանդիպում ունեցաւ առաջին կամաւորականներուն հետ՝ անոնց հաստատելով, որ զինուած ուժերը իրենց դիրքերուն մէջ ամուր են, իսկ պատասխանը պիտի ըլլայ համաչափ: Արցախի Նախագահը այս մասին գրառում կատարեց Դիմատետրի իր էջին վրայ:

«Այսօր վաղ առաւօտեան, չլիման գծի ողջ երկայնքով եւ բազմաթիւ խաղաղ բնակավայրերի ուղղութեամբ թշնամին սկսել է աշխուժ հրետակոծութիւն: Բնակչութեանը կոչ ենք անում պատսպարուել, ցուցաբերել հանգստութիւն:

«Բիչ առաջ հանդիպել եմ մեր առաջին կամաւորականներին: Հաւաստիացնում եմ՝ մեր զինուած ուժերն իրենց դիրքերում ամուր են, իսկ պատասխանը լինելու է համաչափ: Իրավիճակի ողջ պատասխանատւութիւնը կրում է Ագրայեմանի ռազմաքաղաքական ղեկավարութիւնը եւ իւրաքանչիւր կորստի համար պատասխան են տալու:

Սա կենսոց մահու կրի է, որն ընդունում ենք ազգովի եւ ազգովի յաղթանակ ենք տանելու», գրեց Յարութիւնեան:

Արցախի Չանրապետութեան Նախագահ Արայիկ Յարութիւնեանի խօսքով՝ Արցախի դէմ, բացի Ագրայեմանէն, կը կռուի նաեւ Թուրքիան: Այս մասին Յարութիւնեան ըսաւ Սեպտեմբեր 27-ի երեկոյեան հրափրուած ճեպագրոյցի ընթացքին:

«Մեզի հետ կը կռուի նաեւ Թուրքիան: Կ'օգտագործեն թրջական բանակի ձեռքի տակ եղած հիմնական ժամանակակից զէնքերն ու զինամթերքը՝ անօդաչու թռչող սարքեր եւ ինքնաթիւներ: Չեմ խօսիր վարձկաններու, այլ երկիրներէ կամաւորականներու մասին: Արցախը կը կռուի միայն օգտագործելով Արցախի բանակի ուժերը եւ պիտի ըլլան կամաւորներ միայն Չայաստանէն, հակառակ անոր որ Չայաստանի կառավարութեան որոշումը կայ՝ յայտարարելու ռազմական դրութիւն եւ զօրաշարժ», ըսած է Յարութիւնեան:

Արցախի Նախագահը նշած է, որ պաշտպանութեան բանակը կը կատարէ իր առջեւ դրուած խնդիրը:

«Դիրք կորսնցուցած ենք, հնարաւոր է՝ նաեւ կորսնցնենք: Դիրքեր պիտի գրաւենք հաստատ: Պատերազմի արդիւնքները մեզի համար կանխատեսելի են, թշնամիին ծրագիրը պիտի ձախողի: Արդէն իսկ ունին հարկւրաւոր կորուստներ, զրահամեքենաներու տասնեակ կորուստներ», նշեց Արցախի Նախագահը:

ԼԱԻՐՈՎ ՊԱՅՐԱՄՈՎԻ ՀԵՏ ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ԶՐՈՅՑԻ ԸՆԹԱՅՔԻՆ ԸՆԴԳԾԱԾ Է ԶԻՆԱԴԱԴԱՐԻ ՇՈՒՏԱՓՈՅԹ ՀԱՍՏԱՏԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ



Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկեյ Լաւրով երեկ հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է ազրայեճանցի իր պաշտօնակիցին՝ Ճէյ-հուն Պայրամովի հետ։

«Նախարարները քննարկած են Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գոտիին մէջ կացութեան կտրուկ սրումը։ Լաւրով լուրջ մտահոգութիւն յայտնած է շփման գիծին մէջ լարուածութեան շարունակուող սրումին գծով, մանաւանդ որ անկկա պատճառ դարձաւ մարդկային կորուստներու, ներառեալ՝ խաղաղ բնակչութեան», կ'ըսուի Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան հրապարակած յայտարարութեան մէջ։

Կը նշուի, որ ռուսական կողմը ընդգծած է շուտափոյթ զինադադարի անհրաժեշտութիւնը։

«Ռուսիան ԵԱՀԿ-ի Մինսքի խումբի միւս համանախագահներու հետ միասին պիտի շարունակէ միջնորդական ջանքեր գործադրել՝ իրավիճակի կարգաւորման վերաբերող», կը նշէ հաղորդագրութիւնը։

ՌՈՒՍԻԱ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵ՛ ԱՆՅԱՊԱՂ ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ԿՐԱԿՈՅՆԵՐԸ



Ռուսիան կոչ ուղղեց՝ անյապաղ դադրեցնելու կրակոցը դարաբաղեան-ազրայեճանական շփման գիծին մէջ։ Այս մասին հաղորդագրութիւն հրապարակած է Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը։

«Ըստ գոյութիւն ունեցող տեղեկատուութեան, Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գոտիին մէջ իրավիճակը կտրուկ կերպով սրած է։ Երկու կողմէն ալ շփման գիծի երկայնքով կ'ընթանայ բուռն կրակոց։ Կան կորուստներու մասին հաղորդագրութիւններ։ Կողմերուն կոչ կ'ուղղենք՝ անյապաղ դադրեցնելու կրակոցը եւ բանակցութիւններու սկսելու՝ իրավիճակը կայունացնելու համար», նշուած է հաղորդագրութեան մէջ։

ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ... Շարունակուած Ա. Էջէն

Հայաստանի վարչապետի աշխատակազմի տեղեկատուութեան եւ հասարակութեան հետ կապերու վարչութեան կը տեղեկացնեն, թէ Հայաստանի վարչապետը դիտել տուած է, որ Ազրայեճան 27 սեպտեմբերին ռազմական գործողութիւններու սկսած է Արցախի հետ շփման գիծին ամբողջ երկայնքով։

Ան խոր մտահոգութիւն յայտնած է ստեղծուած իրավիճակին գծով։ Մասնաւորապէս ընդգծուած է, որ Ազրայեճան կը դիմէ սադրանքներու Հայաստանի Հանրապետութեան հետ պետական սահմանին ուղղութեամբ եւս ռազմական գործողութիւններու սկսելու։

Հայաստանի վարչապետը զրուցակիցին ուշադրութիւնը հրաւիրած է Թուրքիոյ խիստ կողմնակալ ու յարձակողապաշտ դիրքորոշման եւ այդ երկրի հաւանական միջամտութիւնը կասեցնելու անհրաժեշտութեան վրայ։

Վարչապետ Փաշինեանի հետ հեռաձայնային զրոյցին ընթացքին Նախագահ Մաքրոն խոր մտահոգութիւն յայտնած է Արցախի մէջ ստեղծուած իրավիճակին գծով եւ անթույլատրելի նկատած լարուածութեան հետագայ խորացումը։

Նախագահ Մաքրոն անհրաժեշտ սեպած է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցներու՝ ռազմական գործողութիւնները դադրեցնելու եւ լարուածութիւնը լիցքաթափելու ուղղութեամբ։ Ան նաեւ կարելոր նկատած է ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահներու ջանքերու աշխուժացումը՝ տարածաշրջանին մէջ խաղաղութիւն վերահաստատելու համար։

ՖՐԱՆՍԱ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵ՛ ԱՆՍԻՋԱՊԵՍ ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ԹՇՆԱՄԱԿԱՆ ԱՐԱՐՔՆԵՐԸ ԵՒ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

Ֆրանսայի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Անիէս վոն տեր Մոլ երեկ՝ հաղորդագրութիւն մը հրապարակելով, յայտնեց. «Ֆրանսան խորապէս մտահոգ է Լեռնային Ղարաբաղի մէջ լայնածաւալ բախումներուն եւ մասնաւորաբար քաղաքայիններու շարքերուն մէջ զոհերու արձանագրութեան վերաբերող տեղեկութիւններուն գծով, եւ կոչ կ'ուղղէ՝ անմիջապէս դադրեցնելու թշնամական արարքները եւ երկխօսութիւնը շարունակելու»։

Կոն տեր Մոլ ըսաւ, որ Ֆրանսան՝ իբրեւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համա-



նախագահ երկիր «իր ռուս եւ ամերիկացի գործընկերներուն հետ կը հաստատէ իր յանձնառութիւնը՝ բանակցութեան ճամբով եւ միջազգային օրէնքի հիմամբ այս հակամարտութեան լուծում գտնելու»։

ՎՐԱՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԵ

Վրաստանի նախագահ Սալոմէ Չուրապիշվիլի «ծայր աստիճան մտահոգութիւն» յայտնած է կիրակի օր Լեռնային Ղարաբաղի շփման գիծին վրայ վերսկսած զինուորական գործողութիւններուն նկատմամբ։ Այս մասին կը հաղորդէ Թիֆլիսի մէջ «Վրեմիա» օրաթերթին թղթակիցը։

«Մենք խաղաղութեան կոչ կ'ուղղենք։ Կայունութիւն ու խաղաղութիւնը մեր տարածաշրջանին մէջ պէտք է ըլլան մեր



հասարակաց գործը», գրած է Չուրապիշվիլի թուիթթրեան իր էջին վրայ։

ԻՐԱՆ. «ՄՏԱՀՈԳՈՒԹԵԱՄԲ ԿԸ ՀԵՏԵՒԻՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶՐԱԷՅՃԱՆԻ ՄԻՋԵՒ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԵԱՆ՝ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԴԱԴՐԵՑՄԱՆ ԿՈՉ ՈՒՂՂԵԼՈՎ»

Թեհրան երեկ Հայաստանի եւ Ազրայեճանի կոչ ուղղեց՝ անմիջապէս դադրեցնելու շփման գիծին վրայ մարտական գործողութիւնները եւ երկու կողմերուն միջեւ երկխօսութեան սկսելու՝ պատրաստակամութիւն յայտնելով իր կարողականութիւնը ի սպաս դնելու զինադադարի հաստատման։ Այս մասին կը հաղորդէ «Սփուրնիք»-ը։

Իրանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Սայիտ Խաթիպազատե՝ հաղորդագրութիւն մը հրապարակելով, յայտնեց. «Իրանի իսլամական հանրապետութիւնը մտահոգութեամբ ու մօտէն կը հետեւի Ազրայեճանի եւ Հայաստանի միջեւ զինեալ լարուածութեան»՝ երկու կողմերուն կոչ ուղղելով «ինքազսպումի, մարտա-



կան գործողութիւնները դադրեցնելու եւ անմիջապէս երկխօսութեան սկսելու»։

«Թեհրան պատրաստ է զինադարի հաստատման ու երկու կողմերուն միջեւ բանակցութիւններու սկսման օժանդակելու», նշեց Խաթիպազատե։

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱԳԻՆԵՐ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՄԲ... Շարունակուած Ա. Էջէն

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբերը նաեւ տեղեկացուցած է, որ այսօր փոխնախարար Սթիվըն Պիկանը հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Հայաստանի ու Ազրայեճանի արտաքին գործոց նախարարներուն հետ՝ կոչ ուղղելով անյապաղ զինադադար հաստատելու, օգտագործելու ուղիղ կապը՝ իրավիճակի հետագայ սրացումէն խուսափելու համար, ինչպէս նաեւ զերծ մնալու անօգուտ իռետորաբանութենէ եւ գործողութիւններէ, որոնք աւելի կը սրեն իրավիճակը։

«Մենք կոչ կ'ուղղենք կողմերուն աշխատելու Մինսքի խմբակի համախաղաղութեան եւ ԵԱՀԿ Մինսքի խմբակի համանախագահի հետ՝ որքան կարելի է արագ բովանդակային բանակցութիւններու

վերադառնալու համար», յայտարարած է Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան բանբերը՝ աւելցնելով. «Իբրեւ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահ՝ Միացեալ Նահանգներ կը շարունակեն հաւատարիմ մնալ տագնապի խաղաղ ու տեւական լուծման հասնելու հարցով կողմերուն աջակցելու իրենց յանձնառութեան»։

ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԵՒ ԱՆՀԱՏՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱԼ

Այն միութիւններու ու այն անհատները, որոնք կ'ուզեն դասախօսական ձեռնարկներու եւ ընդունելութիւններու համար «Ազգակ»-ի «Փիւնիկ» սրահը օգտագործել, կրնան հեռաձայնել «Ազգակ»-ի խմբագրատուն, հեռ. 258526-260115-241274, երկուշաբթիէն ուրբաթ օրերը, երեկոյեան ժամը 5:30-էն մինչեւ ժամը 7:30:

ՄԱԿ-Ի ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԸ ԿՈՉ ՈՒՂՂԱԾ Է ԴԱԴՐԵՑՆԵԼՈՒ ԱՐՑԱԽԻ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ ԸՆԹԱՑՈՂ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ



ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիօ Կուրիքեյը կոչ ուղղած է անյապաղ դադրեցնելու Արցախի ուղղութեամբ ընթացող մարտական գործողութիւնները։ «Արմէնփրես»-ի համաձայն, կազմակերպութեան պաշտօնական կայքին մէջ հրապարակուած յայտարարութեան մէջ նշուած է, որ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարը խիստ անհանգստացած է Լեռնային Ղարաբաղի տագնապի գոտիի շփման գիծին մէջ ռազմական գործողութիւններու նոր վերսկսումով եւ կը դատապարտէ ուժի կիրարկումը, կը ցաւի քաղաքացիական բնակչութեան մէջ զոհերուն եւ կորուստներուն համար։

Ընդհանուր քարտուղարը կողմերուն վճռականօրէն կոչ ուղղած է անյապաղ դադրեցնելու մարտական գործողութիւնները եւ վերադառնալու կառուցողական բանակցութիւններուն։ Ան խօսած է թէ՛ Ազրայեճանի նախագահին եւ թէ՛ Հայաստանի վարչապետին հետ։

Ան վերահաստատած է իր լիակատար աջակցութիւնը ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներու կարելոր դերին եւ կոչ ուղղած կողմերուն սերտօրէն համագործակցելու անոնց հետ՝ առանց նախապայմաններու երկխօսութեան շուտափոյթ վերսկսման համար։

«ՄԵՐ ԴՐԱՅԻՆԵՐԸ ՄԵՋԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹԻՒՆ ԵՆ, ՊԱՏՐԱՍ ԵՆՔ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԼԱՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԱՌԱՋԱՐԿԵԼ» ԶԱՐԻՖ



Իրանի արտաքին գործոց նախարար Մուհամետ ժաւատ Զարիֆ թուիթթրեան իր էջին վրայ անդրադարձած է Լեռնային Ղարաբաղի մէջ ընթացող զինուորական գործողութիւններուն՝ կոչ ուղղելով անյապաղ վերջ տալու բռնութեան եւ հարցը բանակցային սեղանի շուրջ լուծելու։

«Իրան ուշադիր կը հետեւի Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցող տագնապալի բռնութեան դեպքերուն։ Կոչ կ'ուղղենք՝ անյապաղ վերջ տալու զինուորական գործողութիւններուն եւ տարակարծութիւնները լուծելու երկխօսութեան միջոցով։ Մեր դրացիները մեզի համար առաջնահերթութիւն են, եւ մենք պատրաստ ենք բանակցութիւններու լաւ պայմաններ առաջարկել», գրած է Զարիֆ եւ աւելցուցած. «Մեր տարածաշրջանին մէջ այժմ խաղաղութեան կարիք կայ»։

ՊԱՐԳԵՒ ԱՐՔ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ. «ՄԻՐԵԼԻ...» Շարունակուած Ա. Էջէն

Ձեր ոգին ամրացրեք եւ հզօրացրեք անկոտրում ուժով եւ միասնականութեամբ։

Կոչ եմ անում աղօթել մեր երկրի անվտանգութեան, յարգանակի եւ ապահովութեան համար։

Դիմում եմ մեր բոլոր հաւատացեալ զաւակներին, Ստեղծել աղօթքի միահամուռ շղթայ եւ երկու ժամը մէկ աղօթք անել եւ զօրավիգ լինել մեր բանակին։

Աստուած մեզ պահապան, զօրավիգ եւ օգնական»։

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱԶԲԴԵՅՈՒՄՆԻ ՄԻԱԿ ԽԵԼԱՄԻՏ ՈՒՂԻՆ ԶԻՆԱԴԱԴԱՐՆ Է»

ԼԵՅԱՍՏԱՆԻ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐ



Լեհաստանի արտաքին գործոց նախարարությունը մտահոգություն յայտնած է Լեռնային Ղարաբաղի սահմանին վրայ տեղի ունեցող իրադարձություններուն առնչությամբ եւ Ազրայեյճանին ու Յայաստանին կոչ ուղղած է՝ հակամարտութիւնը լուծելու խաղաղ դիւանագիտական ճամբով:

ԹԱՍՍ կը հաղորդէ, որ այս մասին կ'ըստի երկրի արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ:

«Լեհաստանի արտաքին գործոց նախարարութիւնը խորապէս մտահոգուած է Լեռնային Ղարաբաղի սահմանին վրայ գիւտուրական բախումներու մասին տեղեկութիւններով: Կոչ կ'ուղղենք՝ դադրեցնելու մարտերը, ինչպէս նաեւ վերականգնելու խաղաղ բանակցութիւնները, մասնաւորաբար՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ծիրին մէջ», կ'ըստի նախարարութեան յայտարարութեան մէջ:

Բացի ատկէ, երկրի արտաքին գործոց նախարար Զպիկնէ Դաուն եւ թուրքերէն գրառում կատարած է՝ կարծիք յայտնելով, թէ «Յայաստանի եւ Ազրայեյճանի համար միակ խելամիտ ուղին գիւտադարն է, լարուածութեան մեղմացումն ու բանակցութիւնները»:

«ԱԶԲԴԵՅՈՒՄՆ ԴԵՏՔ Է ԱՆՅԱՊԱՂ ԴԱԴԻԵՅՆԷ ԻՐ ԶԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՋ»

Կ'ԸՍԷ ԵՐՐՈՂԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ԱՆՂԱՍԸ



Եւրոպական խորհրդարանի երեսփոխան, Եւրոպական ժողովրդային կուսակցութեան խմբակցութեան արտաքին հարցերով բանբեր Միխայէլ Կալըր «Թուրքեր» ընկերային ցանցի վրայ անդրադարձած է 27 սեպտեմբերի առաւօտեան Լեռնային Ղարաբաղի մէջ սկսած բախումներուն:

«Ազրայեյճան պէտք է անյապաղ դադրեցնէ իր գիւտուրական գործողութիւնները Լեռնային Ղարաբաղի մէջ: Արդէն համաձայնութիւն գոյացած էր, որ հակամարտութեան լուծումը պիտի փնտռուի խաղաղ բանակցութիւններու միջոցով: Ազրայեյճանի եւ Յայաստանի միջեւ լայնածաւալ պատերազմը պէտք է կանխարգիլուի. պիտի տառապին հակամարտող կողմերու ժողովուրդները», գրած է պաշտօնատարը:

www.afhil.com

www.lokh-arcl.org

ՊՈՒՐԾ ՀԱՄՈՒՏԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԿԱՅՔԷԶԸ

www.bourjhammoud.gov.lb

«ԱԶԴԱԿ»Ի
ԱՐԱՔԵՐԷՆ ԿԱՅՔԷԶԸ
www.aztagarabic.com

«ՎՃՈՒԱԿԱՆՈՐԷՆ ԿԸ ԴԱՏԱՊԱՐՏԵՄ ԱՐՅԱԽԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՎՐԱՅ ԱԶԲԴԵՅՈՒՄՆԻ ՆԱԽԱՅԱՐՁԱԿՈՒՄԸ»

Կ'ԸՍԷ ԷՆՍԹԱԹՈՐ



«Ես վճռականորէն կը դատապարտեմ Արցախի ժողովուրդին դէմ Ազրայեյճանի նախադարձութիւնը», գրած է երեսփոխանը:

ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԸ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ՝ ԴԱԴԻԵՅՆԵԼՈՒ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Յայցօ Մաաս կոչ ուղղած է՝ անյապաղ դադրեցնելու մարտական գործողութիւնները Ղարաբաղեան ազրայեյճանական շփման գիծին վրայ, նաեւ գիւղերու ու քաղաքներու ռմբակոծումը: «Արմէնփրես» կը հաղորդէ, որ այս մասին կը յայտնէ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութեան պաշտօնական կայքը:

«Շփման գիծի ամբողջ երկայնքով զանգուածային բախումներու վերսկսման մասին լուրը իսկապէս մտահոգած է զիս: Արդէն տեղեկութիւններ կը ստացուին երկու կողմերու քաղաքացիական բնակչութեան շարքերուն մէջ արծառագրուած զոհերու մասին: Ես կոչ կ'ուղղեմ հակամարտութեան կողմերուն՝ անյապաղ դադրեցնելու բոլոր մարտական գործողութիւնները եւ յատկապէս գիւղերու ու քաղաքներու ռմբակոծումները», ըսած է Մաաս:



Գերմանական դիւանագիտութեան պետը Նշած է, որ Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի հակամարտութիւնը կրնայ լուծուիլ միայն բանակցութիւններու միջոցով:

«ԵԱՀԿ-ի Մինսքի խումբը եւ անոր երեք համախաղաղները պատրաստ են աջակցելու ատոր: Յայաստանն ու Ազրայեյճանը պէտք է անյապաղ ձեռնարկեն միայն բանակցութիւններու, նշած է նախարարը:

ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՈՐԵՐԶԸ

Շարունակուած Ա. Էջէն

Ռմբակոծութեան եւ ենթարկում Արցախի խաղաղ բնակչութիւնը, մայրաքաղաք Ստեփանակերտը, Արցախի Յանրապետութեան քաղաքացիական ենթա-կառուց-ուածքները: Այս պահի դրութեամբ կան արդէն զոհեր եւ վիրաւորներ, այլ թուով՝ խաղաղ բնակչութեան շրջանում:

Օգտագործելով ծանր սպառազիւնութիւն, հրետանի, հետեանկ՝ հակառակորդը գրոհի է ենթարկում պաշտպանութեան բանակի դիրքերը՝ բոլոր ուղղութիւններով: Պաշտպանութեան բանակը այս պահի դրութեամբ յամառ մարտեր է մղում եւ պատուով է կատարում Արցախը պաշտպանելու իր խնդիրը՝ ձեռնարկելով իրավիճակից բխող գործողութիւններ:

Սիրելի՛ ժողովուրդ, Իլիւմ Ալիւի բռնատիրական վարչակազմը վերստին անցել է պատերազմական գործողութիւնների: Դա հայ ժողովրդին յայտարարուած պատերազմ է: Դա պատերազմ է մեր անկախութեան, ազատութեան եւ արժանապատուութեան դէմ:

Դայ ժողովուրդը պատրաստ է այդ պատերազմին: Զանգի միշտ սթափ գիտակցել է, որ հայատեացութիւնը, թշնամանքը եւ ատելութիւնը, որով տասնամեակներ ի վեր ազրայեյճանական բռնապետութիւնը սնում է իր ժողովրդին, չէր կարող որեւէ այլ արդիւնքի յանգեցնել, քան պատերազմը: Ազրայեյճանի բռնապետութիւնն իր իսկ վարած հակահայկական քաղաքականութեան պատանդն է դարձել եւ այսօր փորձում է արդարացնել իր իսկ որդեգրած քարոզչական խոստումները՝ Ղարաբաղեան հակամարտութիւնը ազգական միջոցներով լուծելու մասին:

Դայ ժողովուրդը պատրաստ է արժանի հակահարուած հասցնել թշնամուն: Դայաստանի Դանրապետութիւնը Արցախի Դանրապետութեան անվտանգութեան եւ անկախութեան երաշխարկն է: Եւ Դայաստանի Դանրապետութիւնը իր բնակչութեան ու

պետական համակարգի ողջ ներուժով այսօր կանգնած է Արցախի թիկունքին: Մենք գործադրելու ենք հնարաւոր եւ անհնարին ամեն ջանք մեր հայրենիքի սահմանները անաթիկ պահելու, մեր ազատութիւնն ու անկախութիւնը պաշտպանելու համար: Որպէս 1994թ. հրադադարի համաձայնագիրը ստորագրած կողմ՝ Դայաստանի Դանրապետութիւնը քաղաքական, դիւանագիտական եւ ռազմական հարթակներում ձեռնարկելու է անհրաժեշտ գործողութիւններ՝ ԼՂ ժողովրդի ֆիզիքական անվտանգութիւնը ապահովելու եւ հակառակորդին խաղաղութիւն պարտադրելու նպատակով:

Այս պահի դրութեամբ հակառակորդն արդէն իսկ կրում է մարդկային եւ գիտնեքիկայի զգալի կորուստներ: Ազրայեյճանը պէտք է քաջ գիտակցի, որ մեր բանակի մարտունակութիւնն այսօր բարձր է, քան երբեք: Թշնամին պէտք է հասկանայ, որ Արցախի թիկունքին այսօր կանգնած է համայն հայութիւնը:

Մենք միասնական ենք ինչպէս միշտ: Մենք միասնական ենք, ինչպէս եղել ենք մեր պատմութեան վճռորոշ բոլոր պահերին, երբ ոսոխը սպառնացել է մեր գոյութեանը, մեր ինքնութեանն ու արժեքներին: Ազրայեյճանի բռնապետ իշխանութիւնները պէտք է հասկանան, որ անհնարին է ծնկի բերել հայ ժողովրդին: Մենք մեր հազարամեայ պատմութեան ընթացքում ունեցել ենք բազմաթիւ վճռորոշ պահեր եւ յաղթահարել բազում դժուարութիւններ: Մեր գործն արդար է եւ այս յանցաւոր ոտնձգութիւնը եւս արժանի հակահարուած կը ստանայ:

Մենք լաւ գիտակցում ենք, որ ազրայեյճանական բռնապետութիւնը ռազմական գործողութիւններ կարող է սկսել նաեւ Դայաստանի Դանրապետութեան սահմանների ուղղութեամբ ու դիմել տարբեր սարդաւանքների՝ տարածաշրջանում իրավիճակն ամբողջովին ապակայունացնելու համար:

Շար.ը՝ էջ 7

«ԲՈԼՈՐ ԿՈՂՄԵՐԷՆ ԿԸ ԽՆԴԻՆԷ ԵՐԿԻՍՈՍՈՒԹԵԱՆ ՄԿՍԻԼ՝ ԽԱՂԱՂ ՄԷՋՈՑՆԵՐՈՎ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ»

Կ'ԸՍԷ ԳԱՅԻՐԷ



Եգիպտոս կոչ ուղղած է Դայաստանին ու Ազրայեյճանին՝ զսպուածութիւն դրսեւորելու եւ դադրեցնելու կացութեան սրումը: ԹԱՍՍ-ի փոխանցմամբ, այս մասին կ'ըստի Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ:

«Ուշադրութեամբ կը հետեւինք Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանին մէջ իրավիճակի զարգացման եւ երկու կողմին ալ կոչ կ'ուղղենք՝ զսպուածութիւն դրսեւորելու եւ դադրեցնելու հակամարտութեան սրումը: Եգիպտոսը կը խնդրէ բոլոր կողմերէն երկխօսութեան սկսելու՝ խաղաղ միջոցներով լուծման հասնելու նպատակով՝ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի ծիրին մէջ, միջազգային օրինականութեան համաձայն», ընդգծած է նախարարութիւնը:

ՅՈՒՆԱՍՏԱՆ ԶՍՊՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԵՐՈՒՆ



Յունաստանը խիստ մտահոգութեամբ կը հետեւի Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանին մէջ լարուածութեան սրման եւ զսպուածութեան կոչ կ'ուղղէ հակամարտութեան կողմերուն:

ԹԱՍՍ կը հաղորդէ, որ այս մասին ըսուած է Յունաստանի արտաքին գործոց նախարարութեան հրապարակած հաղորդագրութեան մէջ:

«Մենք մեծ մտահոգութեամբ կը հետեւինք Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանին մէջ լարուածութեան աճին, որ խաղաղ բնակչութեան շարքերուն մէջ զոհեր պատճառած է: Մենք բոլոր կողմերուն կոչ կ'ուղղենք՝ զսպուածութիւն ցուցաբերելու, անյապաղ դադրեցնելու գիւտուրական գործողութիւնները եւ վերադառնալու Մինսքի խմբակի ծիրին մէջ բանակցութիւններու սեղան», ըսուած է յայտարարութեան մէջ:

ԱՖՀԻԼ Since 1998 **AFHIL**
ARMENIAN MUTUAL FUND

20 Years of Commitment

"The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others"

Mahatma Gandhi

Health Insurance Travel Insurance GoodCare Clinic Car Insurance Health Clubs

Home Medical Equipment BOB - Western Union University and Student Fund «99/100» Health Magazine

www.afhil.com AFHIL Mutual Fund
Bourj Hammoud, Arin Center, 4th Floor Tel. 01 242 556/7

ՄԷԿՈՒԿԷՍ ԱՄՍՈՒՆՆ
ՆՈՐ ԺԱՄԿԷՏ ԾՇՆԵԼՈՎ՝

ՆԱԽԱԳ-ԱՀ ՄԱՔՐՈՆ. «ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԻՒՆԸ ԶԷ ԳԱԳՐԱԾ ԵՒ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ»



«Ֆրանսական նախաձեռնությունը չէ դադրած, եւ պիտի շարունակուի անոր ճամբու քարտեւը», յայտարարեց Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն երեկ՝ կիրակի երեկոյեան, մամլոյ ասուլիս մը տալով: Յատուկ Լիբանանի կացութեան անդրադարձող իր խօսքին մէջ Ֆրանսայի նախագահը վեց շաբթուան նոր ժամկետ ճշդեց լիբանանեան պատկան կողմերուն՝ կազմելու համար նոր կառավարութիւնը, «այլապէս՝ տարբեր որոշումներ պիտի տրուին» դիտել տուաւ Մաքրոն:

Լրագրողներու հարցումներուն պատասխանելով՝ նախագահ Մաքրոն քննադատեց լիբանանեան քաղաքական ընտրանին, որ «հրաժարեցաւ իր յանձնառութենէն եւ երկիրը պատանդ պահեց ի սպաս իր շահերուն»:

«Չարիքին սխալեցաւ համայնքային չափանիշ աւելցնելով նախարարական պաշտօններու դասաւորումին մէջ», շեշտեց Ֆրանսայի նախագահը: Ան քննադատեց նաեւ Զըզպալլայի կեցուածքը, որ չի կրնար միաժամանակ ըլլալ միլիտ՝ Սուրիոյ կողքին, Իսրայելի դէմ պատերազմող բանակ եւ Լիբանանի մէջ յարգուած կուսակցութիւն, անհրաժեշտ է, որ Զըզպալլա պատմական քայլի դիմէ: «Ոչ ոք կը վստահի Լիբանանի ելեւմտական այժմու վարչակարգին, եւ Լիբանան երբեք փայլուն ոսկի շրջան չէ ապրած ելեւմտական այս վարչակարգի վարքագիծին հետեւելով», շեշտեց Ֆրանսայի նախագահը: Ան անհաւանական նկատեց Լիբանանի մէջ քաղաքացիական պատերազմի վտանգը: Արտաքին կողմերու մասին հարցումի մը անդրադառնալով՝ նախագահ Մաքրոն յայտնեց, որ ոչ մէկ փաստ կայ Իրանի կողմէ բանեցուած ճնշումի կամ դերակատարութեան՝ կառավարութեան կազմութեան ձախդողութեան գծով: «Իսկ ամերիկեան պատժամիջոցներու սպառնալիքը որոշ չափով զրգռեց լիբանանեան մթնոլորտը» ընդգծեց Մաքրոն:

ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՈՐԴԵՐԱԸ

Շարունակուած 6-րդ էջէն

Այս Է պատճառը, որ կառավարութեան որոշմամբ Զայաստանի Զանրապետութիւնում յայտարարուել է ռազմական դրութիւն եւ ընդհանուր զօրահաւաք:

ԵԱՀԿ Մինսքի խմբի համանախագահ պետութիւնների եւ միջազգային ողջ հանրութեան ուշադրութիւնը հրաւիրում եմ իրավիճակի լրջութեան վրայ: Զարաւային Կովկասում լայնածաւալ պատերազմի բռնկումը, որի շեմին մենք հիմա կանգնած ենք, կարող է ամենաանկանխատեսելի հետեւանքներն ունենալ: Այն կարող է դուրս գալ տարածաշրջանի սահմաններից եւ ձեռք բերել շատ անելի լայն մասշտաբներ՝ սպառնալով միջազգային անվտանգութեանն ու կայունութեանը:

Միջազգային հանրութեանը կոչ եմ անում՝ գործադրել ազդեցութեան բոլոր լծակները՝ զերծ պահելու Թուրքիային հնարաւոր բոլոր միջամտութիւններից, ինչը վերջնականապէս կ'ապակայունացնի իրավիճակը տարածաշրջանում: Թուրքիայի յարձակողական վարքագիծը, որը խիստ վտանգաւոր դրսեւորում ունեցաւ յատկապէս յուլիսեան դեպքերի ժամանակ եւ շարունակում է այսօր, լուրջ մտահոգութեան տոնիք է տալիս: Թուրքիայի նման վտանգաւոր կեցուածքի պահպանումը ամենակործաւարտ հետեւանքներով է յղի Զարաւային Կովկասի եւ յարակից տարածաշրջանների համար: Միջազգային հանրութիւնը պէտք է միասնական ջանքերով կանխի դեպքերի վտանգաւոր զարգացումը եւ տարածաշրջանը զերծ պահի ապակայունացնելու բոլոր փորձերից:

Սիրելի՛ հայրենակիցներ, Այսօր մենք կանգնած ենք լուրջ վտանգի առաջ: Իրավիճակը անելի է բարդանում համավարակի պայմաններում: Ուստի պահի լրջութիւնը պահանջում է մեր բոլորի զգոնութիւնը: Մեր յաղթանակը կախուած է մեզինք իւրաքանչիւրի անհատական եւ մեր միասնական, հաւաքական ջանքից եւ պահուածքից:

Կոչ եմ անում բոլորին ցուցաբերել բարձրագոյն աստիճանի կարգապահութիւն եւ բարձր քաղաքացիական գիտակցութիւն: Եւ մենք կը յաղթենք:

Եւ ուրեմն՝
Կեցցէ ազատութիւնը,
Կեցցէ Զայաստանի Զանրապետութիւնը,
Կեցցէ Արցախի Զանրապետութիւնը,
Կեցցենք մենք եւ մեր երեխաները, որ ապրելու ենք ազատ եւ երջանիկ Զայաստանում, ազատ եւ երջանիկ Արցախում:

Փառք հայոց բանակին:
Յաւերժ փառք հայ զինուորին»:

ՀԱՎԱՌԱԿ ԿՈՂՄԵՐՈՒ ԽՈՍՏԱԶԱԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՍՈՒԹԵԱՆ

ՄՈՒՍԹԱՅԱ ԱՏԻՊ ՀՐԱԺԱՐԵՑԱՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԵՆԷՆ

Հակառակ կողմերուն ցուցաբերած գործակցութեան պատրաստակամութեան՝ նշանակեալ վարչապետ Մուսթաֆա Ատիպ շաբաթ օր Պաապտայի մէջ նախագահ Աունի հետ իր 6-րդ հանդիպումին ընթացքին անոր յայտնեց իր հրաժարիլը կառավարութիւնը կազմելու պարտականութենէն: Զաղաքական պատկան շրջանակներ ցաւ յայտնեցին «կորսուած առիթին համար»: Այլ կողմեր պատասխանատու նկատեցին Նոյնիքն Մուսթաֆա Ատիպը, որ կը խուսափէր խորհրդարանական եւ կուսակցական կողմերու հետ խորհրդակցելէ՝ նախարարներու ինքնութեան որոշումին համար:

Ըստ այդ կողմերու մօտիկ աղբիւրներուն, «կարելի չէ երկիրը յանձնել այնպիսի մարդոց, որոնց ինքնութեան եւ քաղաքական արեւելումին ծանօթ չենք»: Փաստօրէն երկիրը կը գտնուի ներքին թէ արտաքին անխուսափելի իրագործումներու ժամկետներու սեմին, ինչ որ լուրջ մարտահրաւերներ կը յառաջացնէ Նորակազմ կառավարութեան դիմաց: Խորքին մէջ, խորհրդարանական եւ ապա նախագահական յառաջիկայ ընտրութիւններու ժամկետները, լիբանանեան ջուրերէն նաւթի արտաբերման եւ անոր Լիբանանի տնտեսութեան հայթայթելիք ներդրումի հաւանականութիւնը՝ իսրայելեան ընչաքաղց ոտնձգութիւններու սպառնալիքի լուսին տակ, քանի մը ամիս ետք Իսրայելի հետ հարաւի սահմանագիծի ճշդումին մասին արտաքին տեղեկութիւնները անխուսափելի մարտահրաւերներ են լիբանանեան քաղաքական ընտրանին դէմ ցցուած:

Այս բոլորը ներքին ճակատի ապրուստի, առողջապահական, ընկերային եւ ապահովական մտահոգութիւններու կողքին հաշիւներ են, զորս առանցքային դեր ունին կողմերու կեցուածքներու դրսեւորման մէջ: Այս ծիրին մէջ իմացուեցաւ, թէ ըստ «Օ.

ԵՐԿՈՒ ԶՈՀ ՏԱԼՈՎ՝ ԲԱՆԱԿԸ ՀԱԿԱԳԱՐՁԵՑ ԱՐԱՄԱՆԻ ԵՒ ՈՒԱՏԻ ԽԱԼԵՏԻ ԱՀԱՐԵԿՉԱԿԱՆ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐՈՒՆ



Շաբաթավերջին բանակը հակադարձեց հիւսիսի սահմանամերձ Արաման շրջանի իր զօրանոցին դէմ կատարուած յարձակման փորձին, երբ Պրեյս անունով ահաբեկիչ մը կը փորձէր մտնել կապած ռումբերով յարձակում գործել: Յարձակման զոհ գացին բանակային երկու զինուորներ՝ Մոհամետ Խալետ Նաշար (1991-ի ծնունդ) եւ Անմետ Խալետ Սաքր (2001-ի ծնունդ): Նմանապէս սպաննուեցաւ նաեւ ահաբեկիչ Օմար Պրեյս, որ քանի մը ամիս առաջ ազատ արձակուած էր Ռումիի բանտէն, ուր կը գտնուէր ՏԱԳԵԾ-ի անդամակցութեան յանցանքով: Ան մաս կը կազմէր Խալետ Զայուսի ահաբեկչական խմբակին:

Նախքան այդ, մօտակայ Ուստի Խալետ շրջանին մէջ բռնու բախումներ արձանագրուեցան շաբաթէն կիրակի լուսնոյ գիշերուան ընթացքին, երբ բանակը շաբաթ յետմիջօրէին պաշարեց ահաբեկիչներու լքեալ տան մը թաքստոցը եւ անոնցմէ պահանջեց անձնատուր ըլլալ: Ահաբեկիչներ գինւել կերպով դիմադարձեցին, եւ մինչեւ ուշ գիշեր տեւած բախումներու ասարտին բանակը ձերբակալեց 15 զինեալներ ու սպաննեց 9 ահաբեկիչներ: Չորս ահաբեկիչներ փախուստ տուին մօտակայ ամառաշին շրջանը: Ձերբակալեալ ահաբեկիչներուն մէջ կան թիշիւ մը եւ ռումբերու եւ յարակից սարքերու պատրաստութեան «ճարտարագետ» մը:



Թի.Վի» կայանի աղբիւրներուն, նախագահ Աուն անցնող ուրբաթ օր կապի մէջ եղած Է Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի հետ, նախքան նշանակեալ վարչապետ Մուսթաֆա Ատիպի հրաժարականի յայտարարութիւնը:

Ատիպի հրաժարականէն ետք հաւաստի աղբիւրներ անհաւանական կը նկատեն խորհրդարանական շուտափոյթ խորհրդակցութիւններ՝ նախընտրելով դաշինքի լրիւ կազմին շուրջ ըուլիսային համախոհութեան հաստատումէն ետք յայտարարել կառավարութեան աւարտը: Այլ աղբիւրներու կարծիքով՝ հրաժարած կառավարութիւնը կրնայ շարունակել իր ընթացաւարտ աշխատանքները մինչեւ նախագահ Աունի պաշտօնավարութեան աւարտը: Իսկ ըստ «Ար.Թի» («Ռաշա թուտէ») կայքին, Ֆրանսայի նախագահն ու Սեւտական Արաբիոյ թագաւորը խորհրդակցած են լիբանանեան «թնճուկին» լուծում գտնելու մասին՝ նախկին վարչապետ Սաատ Զարիիի միջոցով: Սակայն այս հաւանականութիւններու ճակատագիրը վճռող կեցուածքը եկաւ դարձեալ Ֆրանսայէն, ուր նախագահ Մաքրոն յատուկ այս մասին անդրադառնալով երեկ երեկոյեան տուաւ մամլոյ ասուլիս մը:

ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՎ ԲԱՆԱԿԻՆ ԴԷՍ
ԳՈՐԾՈՒԾ ՅԱՐՉԱԿՈՒՄՆԵՐԸ՝

ՅԱԿՈՐ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ. «ԱՀԱՐԵԿՉՈՒԹԻՒՆԸ ԴԱՐՁԵԱԼ ԹԻՐԱԽ ՈՒՆԻ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՄԱՐԴՈՑ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆԸ»



ՀՀԻ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, երեսփոխան Յակոբ Բագրատունի երեկ հաղորդագրութեամբ մը բռնու կերպով դատապարտեց բանակին դէմ կատարուած ահաբեկչական դէպքը եւ ըսաւ. «Լիբանան ներկայիս կ'ենթարկուի իր դիմադրական կարողութենէն բազմապատիկ գերիվեր դժուարութիւններու եւ ճնշումներու: Արդարեւ, ահաբեկչական այս դիպաշարը դարձեալ թիրախ ունի մարդոց ապահովութիւնն ու հայրենիքի գերիշխանութիւնը՝ սկսելով Զաֆթունի դէպքէն մինչեւ Ուստի Խալետի Հիշի աւանի միջադէպը, հասնելով մինչեւ Մսիե աւանի Արամանի բանակային դիրքին դէմ յարձակումը, որ յանգեցաւ երկու զինուորներու նահատակութեան»:

«Այս բոլորը կու գան հայրենիքի ապահովութեան ու կայունութեան խախտումի ծիրին մէջ», ընդգծեց երեսփոխան Բագրատունի՝ իր խոր յարգանքն ու ակնածանքը յայտնելով լիբանանեան քաջարի բանակին եւ տեղեկատուական բաժանմունքի հարուածող ուժին՝ բարձր գնահատելով անոր անձնակազմին ցուցաբերած գոհաբերող ոգին, ի սպաս հայրենիքի անդորրութեան: Բագրատունի նաեւ իր խոր ցաւակցութիւնները յայտնեց հեռու Նահատակներու ընտանեկան պարագաներուն եւ խոր յարգանքը այն ընտանիքներուն, որոնք դիմադրական կեցուածքով զօրակցեցան ընդդէմ քաղաքացիին ու հայրենիքի ապահովութեան սպառնացող ահաբեկչութեան:

ԴԱՏԱՊԱՐՏԵԼՈՎ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ
ԱՊԱՅՈՎԱԿԱՆ ՈՒԺԵՐՈՒՆ ԴԷՍ
ԱՀԱՐԵԿՉԱԿԱՆ ԱՐԱՐԵՆԵՐԸ՝

ՕՀԱՆԵԱՆ. «ԱՍԻԿԱ ՀԱՅՐԵՆԻՔԻՆ ԴԷՍ ԴԱՄԱԳՐԱԿԱՆ ՍԱԳՐԱՆՔ Է»



Երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարի պաշտօնակատար Վարդիսէ Օհանեան-Գեորգեան երեկ դատապարտեց բանակին եւ ապահովական ուժերուն դէմ գործուած ահաբեկչական յարձակումները: «Ասիկա հայրենիքին դէմ դաւադրական սարդանք է», շեշտեց Օհանեան եւ անելցուց. «Ինչ որ կը կատարուի յստակ թիրախ ունի բանակն ու անոր կողքին կանգնող ապահովական ուժերը, արդ՝ ողջոյն անոնց եւ ինկած նահատակներուն»: «Փաստօրէն, ահաբեկչութեան ցցած գլուխը, յատկապէս Լիբանանի այս դժուար պայմաններուն, վտանգաւոր է, եւ կասկած չկայ, որ անիկա կանխամտածուած է՝ խախտելու համար հայրենիքի եւ պետական կառոյցի կայունութիւնը», ընդգծեց Օհանեան-Գեորգեան՝ բարձր գնահատելով ապահովութեան ուժերու խիզախ դիմադրութիւնը ահաբեկչութեան դէմ՝ պաշտպանելու համար Լիբանանի ազգային միասնականութիւնը, անկախութիւնն ու ժողովուրդը:



ՀՅԴ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ՝ ԱԶԲՊԷՅՃԱՆԻ ՀԱՄԱՏԱՐԱՋ ՅԱՐՁԱԿՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ



Իրենց ձախող յուլիսեան արկածախնդրութենէն անճրկած՝ Ազրպէյճանի իշխանութիւնները անցնող ժամերուն ձեռնարկեցին նոր արկածախնդրութեան մը՝ լայնածաւալ յարձակումի դիմելով Արցախի Զանապետութեան հետ սահմանագիծի ամբողջ երկայնքին։

Հայաստանի եւ Արցախի պաշտպանութեան նախարարութիւններու աղբիւրներէն կը տեղեկանանք, որ ծանր մարտեր տեղի կ'ունենան բոլոր ճակատներուն վրայ, ուր Զայաստանի եւ Արցախի բանակները փայլուն կերպով կը կատարեն հայրենիքի պաշտպանութեան սուրբ գործը։

ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Կեդրոնական կոմիտէն խստագոյնս կը դատապարտէ մեր հայրենիքին վրայ կատարուած ատրպէյճանական նորագոյն այս յարձակումը, որ 1994-ին կնքուած զինադադարէն ետք անսխալեպէս է իր ծաւալով։

Այս առիթով, Կեդրոնական կոմիտէն իր ամբողջական աջակցութիւնը կը յայտնէ Զայաստանի եւ Արցախի հանրապետութիւններուն, ի մասնաւորի հայկական զոյգ բանակներուն, որոնք մեր համազգային պարծանքն են։ Մեր կարգին եւ մեր կարողութիւններով պիտի ընդառաջենք Արցախի պաշտպանութեան բանակի հրամանատար զօրավար Զալալ Յարութիւնեանի արտակոչին՝ մեր բոլոր հնարաւորութիւնները ի սպաս դնելով մեր պետականութեան եւ հայրենի մեր ժողովուրդին։ Մեր կարելի բոլոր միջոցները ի գործ պիտի դնենք, որպէսզի Միացեալ Նահանգներու պետական շրջանակները ծանրագոյն դատապարտանքի խօսքերով ուշքի բերեն խելագարութեան հասած ազրպէյճանական իշխանութիւնները։ Պիտի աշխատինք օրն ի բուն, որ ամերիկեան իշխանութիւնները ամբողջովին վերջ տան Ատրպէյճանին ռազմական օժանդակութիւն տրամադրելու քաղաքականութեան։

Դարձեալ կ'ուզենք յիշեցնել Զայ երիտասարդաց դաշնակցութեան «Մեր զինուորներուն հետ» նախաձեռնութիւնը եւ անգամ մը եւս կը դիմենք մեր համայնքի զաւակներուն՝ զօրավիգ կանգնելու մեր սահմանները պահող հայ զինուորին։

Կասկած չունինք, որ «Ցաղթելու ենք» այս անգամ եւս, եւ ամէն անգամ։

ՀՀԴ ԱՐԵՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԵՐԿՈՒ ԶՈՀ ՏՆԱՌՎ . . .

Շարունակուած 7-րդ էջէն

Ազգային ազատ հոսանք կուսակցութեան նախագահ, նախկին նախարար Ժըպրան Պասիլ դատապարտեց բանակին դէմ կատարուած ահաբեկչական արարքները՝ դիտել տալով, թէ ծայրայեղական բանտարկեալներու համաներում շնորհելու գծով վերապահութիւնը կը մեկնի այսպիսի արարքներու մտավախութենէն։

Սուրի եւ Ժապալ Ամէլի միւֆթի շէյխ Զասան Ապտալլա դատապարտեց բանակին վրայ կատարուած յարձակումը՝ զայն նկատելով Լիբանանի դէմ նիւթուող սադրանքներու մէկ օղակը։

Ընկերվար յառաջդիմական կուսակցութեան նախագահ, նախկին երեսփոխան Ուալիտ Ժումպլաթ դատապարտեց բանակին դէմ կատարուած դէպքը՝ ընդգծելով, որ ահաբեկչութիւնը ո'չ կրօն, ո'չ դաւանանք ունի։ «Այսուհանդերձ, այս դէպքը չ'արդարացնէր համաներումի որոշումին ընդդիմացողներուն վարկածը», ընդգծեց Ժումպլաթ։

Նախկին նախարար Նիքոլա Թուէլիի ցաւակցութիւն յայտնեց բանակի նահատակներու ընտանիքներուն՝ դրուատելով բանակայիւններուն ցուցաբերած քաջարի կեցուածքը։ Թուէլիի մտավախութիւն յայտնեց յաւելեալ ահաբեկչական արարքներու գործադրութեան հաւանականութեան գծով՝ երկիրը ապահովական քառսի մատնելու միտող կանխամտածուած ծրագիրի ծիրին մէջ։

ՀՅԴ ՔԱՆԱՏԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

27 սեպտեմբեր Արցախի դէմ Ազրպէյճանի շղթայագերծած ռազմական գործողութիւնները անգամ մը եւս կը հաստատեն Պաքուի իշխանութիւններու հայատեաց ռազմատենչութիւնն ու յարձակողապաշտ վարքագիծը։

Աւելի'ն, այս անգամ Ազրպէյճանական զինուած ուժերը թիրախ ընտրած եւ հրթիռակոծած են Արցախի մայրաքաղաքն ու քաղաքացիական բնակավայրերը՝ պատճառ դառնալով անմեղ զոհերու։

Անգարայի եւ Պաքուի կողմէ՝ ռազմական, տնտեսական, դիւանագիտական, եւ քաղաքական անհրաժեշտ բոլոր միջոցներով պատերազմ կը մղուի Զայաստանն ու Արցախը հաշուեյարդարի ենթարկելու։

Ի տես այս իրավիճակին, ՀՀԴ Զանատայի Կեդրոնական կոմիտէն կոչ կ'ուղղէ Զանատայի պետութեան եւ յատկապէս արտաքին գործոց նախարարութեան, որպէսզի խստօրէն դատապարտէ Ազրպէյճանական յարձակողապաշտութիւնը։

Ազրպէյճանական այս նենգ յարձակումն ու հրադադարի խախտումը այսօր ետ կը մղուի շնորհիւ հայկական բանակի ստորաբաժանումներու հակահարուածին, բայց մանաւանդ՝ հայ զինուորներու անվեհեր սիրաւքներուն եւ հայրենասիրական ոգին։

Հայոց յաղթական բանակը սահմանային գիծի ամբողջ ճակատին վրայ այսօր կը կատարէ հայրենիքի պաշտպանութեան սրբազան առաքելութիւնը։ Մենք, ինչպէս միշտ՝ Հայոց բանակի եւ հայ զինուորին կողքին ենք այս օրհասական հանգրուանին։

Ոչինչ պիտի խնայենք մեր զօրակցութեան մէջ՝ միանգամընդմիշտ ձախողութեան մատնելու թուրք-Ազրպէյճանական այս յարձակումը։

ՀՀԴ Զանատայի Կեդրոնական կոմիտէն իր Հայ դատի յանձնախումբերով, Զանատայի տարածքին գործող իր բոլոր կառոյցներով, իր ողջ կարողականութեամբ եւ ներուժով՝ վճռականօրէն կազնած է Արցախի եւ Զաստանի հանրապետութեանց կողքին։

ՀՀԴ Զանատայի Կեդրոնական կոմիտէ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՀԴ Արեւելեան Միացեալ Նահանմներու Կեդրոնական կոմիտէն եւ ՀՀԴ Արեւելեան Միացեալ Նահանմներու Կեդրոնական վարչութիւնը կոչ կ'ուղղեն Միացեալ Նահանմներուն եւ միջազմային հանրութեան՝ դատապարտելու Ազրպէյճանի վերջին յարձակումը Արցախի Զանապետութեան բնակչութեան վրայ։

Այս անխնայ ռմբակոծումը կը բացայայտէ Ազրպէյճանի կողմէ մարդկութեան ամբողջական անտեսումը։

Մենք լիովին կը պաշտպանենք Արցախի ժողովուրդի ինքնորոշման իրաւունքը եւ անոնց մէտրիշխանութեան եւ ապահովութեան մարտահրաւերին կողքին ենք։

ՀՀԴ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԱՄՆ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՀՀԴ ԱՐԵՎԵԼԵԱՆ ԱՄՆ-Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

27 սեպտեմբեր 2020
Ուաշինգթոն (Մասաչուսեթ)

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՀՅԴ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԵՒՐՈՊԱՅԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ

Թուրքիոյ բարոյական, ֆիզիքական եւ զինուորական ուղղակի զօրակցութեամբ, Ազրպէյճանը այսօր առաւօտեան անգամ մը եւս լայնածաւալ օդային եւ հրթիռային յարձակում կատարեց արցախեան ամբողջ սահմանագիծին վրայ։ Աւելի ուշ, ազերիական հրետանին թիրախ դարձուց նաեւ Արցախի խաղաղ բնակչութիւնը, ռմբակոծելով մայրաքաղաք Ստեփանակերտը։ Թե՛ մարտեր կը ծաւալին մինչեւ պահս։ Ազերիական վարձկանները ետ շարտուած են ու նահանջած, ստանալով ծանր հարուածներ եւ կրելով լուրջ վնասներ։

Պաքու յայտնապէս չէ համոզուած տակաւին, որ ուժի կիրարկումով պիտի չլաջողի պարտադրել իր կամքը, եւ ինչպէս նախորդ իր բազմաթիւ փորձերուն, այս անգամ եւս պիտի կրէ ջախջախիչ պարտութիւն։

Հայոց մարտունակ բանակի կորովը բարձր է, առնական հայ զինուորը տներն է իր կոչումին, ժողովրդային կամաւորական խումբերը, որոնց շարքին՝ ՀՀԴ պահեստագօրքի գումարտակը արդէն հասած են ճակատ ու կանգնած՝ փառապանծ մեր բանակի կողքին ու թիկունքին, իսկ համայն հայութիւնը, ի Զայաստան եւ ի սփիւռս աշխարհի, կուռ միասնականութեամբ զօրավիգ է անպարտելի Արցախին, բանիւ եւ գործով։

Կեդրոնական Կոմիտէն իր բոլոր միջոցներով եւ Հայ դատի Ֆրանսայի, Զուլանտայի եւ Պելճիքայի մարմիններուն ու ՖՀԿ-ի հետ համադրաբար ու գործակցաբար արդէն իսկ սկսած է տուեալ երկիրներու քաղաքական բարձրագոյն շրջանակներու մօտ յարաբերական աշխուժ աշխատանք, պահանջելով, որ խստիւ դատապարտեն եւ ամէն գնով զսպեն Ազրպէյճանի սանձարձակութիւնը։

Կոչ կ'ուղղեն Ֆրանսայի, Զուլանտայի եւ Պելճիքայի մեր համայնքներու բոլոր զաւակներուն, որ խիտ շարքերով իրենց մասնակցութիւնը բերեն յառաջիկայ օրերուն կազմակերպուող բողոքի հաւաքներուն եւ ելոյթներուն, ի զօրակցութիւն հայոց յաղթական բանակին եւ պինդ ու խրոխտ ժողովուրդին։

ՀՀԴ Արեւմտեան Եւրոպայի Կեդրոնական Կոմիտէ

Փարիզ, 27 սեպտեմբեր 2020

ՊԱՀՆ Է ՄԻԱՅՆ ԶԳՕՆՈՒԹԵԱՆ



Հակառակ վերջին օրերուն տարուած լայնամաշտապ քուլիսային աշխատանքներուն, քաղաքական կողմերուն միջեւ երկար բանակցութիւններուն եւ ֆրանսական առաքելութիւնը յաջողցնելու համար թափուած մեծ ճիգերուն, նորանշանակ վարչապետ՝ Մուսթաֆա Ատիպ , այսօր, 26 սեպտեմբերին հրաժարեցաւ կառավարութեան կազմութեան առաքելութենէն։

Ստեղծուած ներկայ կացութեան արժեւորումը կը կարօտի շատ աւելի խոր քննարկման, սակայն, կասկած վեր է, որ այս պահուան դրութեամբ Լիբանան կը գտնուի բոլոր ժամանակներէ աւելի անորոշ, անկայուն եւ շատ աւելի արմատացող կացութեան մը դէմ յանդիման, որ աւելիով կը մթազնէ անոր ապագան եւ կը սպառնայ աւելի խորացնելու առկա ճգնաժամը։

Մաղթենք, որ մինչեւ բարենպաստ լուծումի մը յանգումը եւ փապուղիէն դուրս գալու փուլը, որուն անպայման , ուշ կամ կանուխ կարելի պիտի ըլլայ հասնիլ, վերականգնումի գործօնները մնան անխորտակ։

Այո՛, ժողովուրդը վճարեց այս կացութեան գինը եւ ասկէ ետք նաեւ պիտի վճարէ տակաւին։

Այս անմիաթաք ու վտանգաւոր կացութիւնը մեզի՝ բոլորիս, կը դնէ անսխալընթաց պարտաւորութիւններու դիմաց։ Վտանգին ամբողջական ընկալումը եւ այս կացութեան մէջ լիբանանահայ համայնքի գոյերթը եւ անվտանգութիւնը պահելը այսօր առաջնահերթ գերխնդիրներ են անտարակ'յս. հետեւաբար՝

1- Հաւաքական պատասխանատուութեամբ եւ ճիգով պիտի շարունակուին համայնքի կարիքները հոգալու եւ վերականգնումի ու վերակազմակերպումի աշխատանքները։

2- Քաղաքական բարդ ու հանգուցաւորուած կացութեան մէջ համայնքի իրաւունքներու պահպանումն ու երաշխաւորումը կը պահանջեն համախմբուածութիւնը դարձնել աւելի ուժեղ ու նպատակասլաց, միշտ ուղենիշ ունենալով այս ուղղութեամբ զաղութի ձեռք բերած յատուկ պատմակշիռ կենսափորձը։

3- Համայնքի միասնակամութիւնը խախտելու, մութ ու թաքուն հաշիւներ հետապնդող եւ իրենք գիրենք "բարեգործ" ներկայացնող, բայց բոլորովին ուրիշ նպատակներ հետապնդող անհատներու որդեգրած վարքագիծին դիմաց պետք է ստեղծել ամուր պատուար ու ցուցաբերել զգաստ վերաբերմունք։

4-Անհատական հաշուարկներով այս կացութիւնը շահագործելու մեր հայորդիներու բարոյառեքսանական դժուարին ու բարդ իրավիճակը դրամագլուխի վերածելով, ոչ մէկ անհատի իրաւունք պիտի տրուի շինծու օրակարգերու ստեղծումով շփոթ ու խուճապ ստեղծելու։

5- Անհրաժեշտ է, որ այս հանգրուանին պատասխանատու մարդոց գրիչները՝ ընկերային ցանցերու վրայ եւ մամուլին մէջ, դառնան աւելի պատասխանատու եւ կառուցողական, եւ ոչ թէ ծառայեն խուճապ ստեղծող, այլապէս առկայ տրամադրութիւններուն, եւ համայնքի ուժակաւութիւնը ջլատող անիմաստ ու միշտ ձախողած փորձերու։

6- Ընդհանուր գործին շուրջ համախմբուելու եւ այդ գործը ընդարձակելու հրամայականը հարկ է, որ համակէ բոլորը։ Այս գործընթացէն բացակայողներուն առիթ պետք չէ տալ իրենց հնամաշ ու կեղծ խրատներով, յերիւրածոյ ամբաստանութիւններով ու անճիշդ տեղեկութիւններով ժողովուրդին եւ ղեկավարութեան միջեւ խրամատներ ստեղծելու եւ համայնքի արժանապատիւ ընթացքին դիմաց պատնէշներ բարձրացնելու։

7- Լիբանանահայութեան նկատմամբ հայաշխարհի ցուցաբերած զօրակցութիւնը գործնապէս արժեւորելով, պետք է ձգտիլ ստեղծելու իրարօգնութեան վարակիչ մթնոլորտ այս ժգնաժամին մէջ եւ հաւատալ ու ակնկալել , որ մեր համայնքի բոլոր հայորդիները՝ իրենց ունեցած կարելիութեան սահմաններուն մէջ, մասնակից դառնան օժանդակութեան ընդհանուր ու վսեմ աշխատանքին։ Պատասխանատուութենէ խուսափումը այս հանգրուանին հայավայել մօտեցում չէ բնա'։

8- ՀՀ Դաշնակցութեան լիբանանեան կառոյցը այսօր իր շարքերը դրած է ընդհանուր զօրաշարժի մէջ է , եւ ՄԻԾՏ ԺՂՂՈՎՈՐԴԻՆ ՀԵՏ ՄՈՎՍԻՆ մնալու համոզումով կը շարունակէ տալ գաղափարական կշիռ։ Այս հանգրուանին Դաշնակցութիւնը անիմաստ կը գտնէ նաեւ հակազդել հակադաշնակցական պայքարի նորելուկ ոճին։ Այդ ոճը ի սկզբանէ դատապարտուած է ձախողութեան։

Մինչ այդ, մաղթենք առողջապահական եւ ապահովական գետնի վրայ անփորձանք օրեր բոլորիս։

ՅԱԿՈԲ ԶԱՒԵՏԱՆ